

Ltn

✓ 12.52

1999

Ա. ՄԱՄՈՒԼ

(ՅԱՒԵԼՈՒԱԾ 1882)

ՏՈՒՆԷՆ ԴՈՒՐՍ

ԹԱՏԵՐԵԽԱԶ

ՅԵՐԵՍ ԱՐԱՐՍ



ՉՄԻՒՌՆ

ՅՊԱԳՐԱԲԹԻՔՆ ԵՂՊԱՐՑ ՏԵՏԻՆԱՆ

—1882—

# Ա. ՄԱՄՈՒԼ

(ՅԱՒԵԼՈՒԱԾ 1882)

*Հարկատու Հարկատու*

ԹԱՏԵՐԱԽԱՂ

ՏՈՒՆԷՆ ԴՈՒՐՍ



ՅԱՂԳԱՅԻՆ Ս. ՄԵՐՈՂԵԱՆ ԴԱՐԺԱՐԱՆ

ԱՌԹԻՒ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՆԳԻՍԻՆ



ԶՄԻՒՌԻՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՂԱՐՑ ՏԷՏԷԿԱՆ

— 1882 —

# ՏՈՒՆԷՆ ԴՈՒՐՍ

ԹԱՏԵՐԱԽԱՂ

ՅԵՐԻՍ ԱՐԱՐՍ

## ԱՆՁԻՆՔ

|         |                           |
|---------|---------------------------|
| ՅԱՄԱՐ   | Հարուստ վաճառական.        |
| ԲԱԳԱՐԱՏ | Կամարի երեց որդին.        |
| ՋԱՔԱՐԻԿ | » փոքր »                  |
| ՀԻՐԻԿ   | » դուստրը.                |
| ՌՈՒՍՏՈՄ | » խորհրդական և մատակարար. |
| ՄՈՒՇԻԿ  | » սպասաւոր.               |
| ԱՐԲՈՒՆ  | » զբաղիւր և լրարէր.       |
| ՀՈՎՆԱԿ  | Գրագէտ.                   |
| ՍԵՒՈՒՆԻ | Օրագրապետ.                |
| ԳԻՍԱԿ   | Մանկավարժ.                |
| ՅԱՐԴՈՍ  | Երբեք ընկեր Կամարի:       |

## ԱՐԱՐ Ա.

### ՏԵՍԻԼ Ա.

ԱՐԲՈՒՆ (առաջին):

ԱՐԲՈՒՆ. (Թերթերու և տետրներու կապոց մը թէքն տակ) Ո՛հ, շա՛ն տանջանք: Առաւօտէն մինչեւ իրիկուն թղթատունները վազէ եւ մեր Կամար պէյին համար օրագիր, լրագիր, յայտագիր, հեռագիր, այցագիր, թելագիր, սիրագիր փնտռէ, եւ հեւալով տուն դարձիր: Ա՛յ իրիկս անցան այս անհատնում բրբրներն ու մրգիրներն, որոց մէջ ո՛ր գիտէ ի՞նչ սատանայութիւններ:

4/252-ա

28. 1955

կան : Այս մրգիրները չեն որ աշխարհ տակնուվրայ կ'ընեն, կազ, կոխ ու շփոթ կ'հանեն : Էն աղէկին Աստուած գէշ տայ : Ո՛հ, ի՛նչ օրերու հասայ . մեր Խաբրըրդը՝ միայն Նարեկ ու Սաղմոս կան, այս տեղ բերատոր սաղմիկներ ու նանրիկներ կան, որ մեղուկներու պէս լաւ, լաւ ծայն կ'հանեն, արինդ կ'ծծեն եւ ապա կ'մեռնին . իսկ մարդիկ անոնց ետեւէն վազելով կարծեն թէ լոյս կ'տեսնեն . . . : Քայց ո՞ր մէկ թերթին հասնիմ . մերենայ մը՝ ստէպ անգլուխ գրիչ մը՝ զայն կ'մրոտէ, մերենայ մը, մամուլը կը տպէ, մերենայ մը՝ խեղճ Պրընսն՝ Թղթատունէն կ'առնէ կ'բերէ, որ ուրիշ մերենայ մը, Լամարս պէյը՝ կարգայ . . . : Պէշ է բանս՝ թէ որ բոպէ մը ուշանամ . . . կկոցի պէս գնա ու եկուր . լաւ եկայ ես այս պաշտօնէս : Թո՛նջ հանգիստ էի ատեն մը՝ երբ աղա վաճառական էր Լամարս, եւ ես՝ խոհարար . հիմակ այն Գէշ . . . չէ, դիւանի պէյ եղաւ . . . կարծեմ սխալ կ'ըսեմ . . . դիւանագիր . . . ես ալ՝ օրագիրներու բեռնակիր : Ամեն կողմս մեկան ու սուտ կ'հոտի, այր ու բէնէն Խաբր չեմ, եւ այս թերթերով զիս տեսնողը կարծէ թէ Խրատէրին չափ խելանի եմ : Հապա տնեցիք մէյմէկ Պրիստոտէլ են, այս թղթերը կ'ուտեն կ'լափեն, կ'մաշեն, եւ վերջը կ'սկսին խենդի պէս պոռպուլ, այնպէս որ անկողնիս մէջէն կ'լսեմ . . . հոմ . . . օ . . . Հուկօ . . . լէր . . . Լիդրէ . . . Կէշէ . . . Թընան . Բանդ, Բօնդ . . . Կոտլ, Պուրլ . . . ո՞ր մէկն ըսեմ, միտքս չ'զար . . . : Աշխարհիս ամեն բանը գիտեն մեր աղաները, բայց տան մէջ անցած դարձածները չեն տեսներ . . . կատուններն ու մկերն անգամ լեզու ելան, եւ՝ եթէ ոչ կարդալ, սկսան դէզ դէզ լրագիրներու մէջ պառկիլ եւ ծեծկըտուրի ելնել . . . : Արըր ոտքի ծայն կ'լսեմ . ո՞ր է սա անհարակ Պուշիկն . անշուշտ այն ալ հին, օ՝ թեկ օրագիր մը կ'կարդայ, եւ հոգը չէ որ այս սենեակը դեռ չէ ալաւ . հող, փոշի, մեկան, Թղթի ու գրչի կտորներ կ'ուզես՝ չորս դին առեր են . . . : (Իսո՛րէն կ'երեւի Մուշէկ՝ աչքերը շփելով՝ գլուխը ԹեքԹե մը վրայ ծածկ)՝ Զըսի՛, ահա կ'գայ Թշուառական :

## ՏԵՍԻԼ Բ.

### ԱՐԲՈՒՆ Լ ՄՈՒՇԻԿ :

**ՄՈՒՇԻԿ.** (կարդալով՝ Թեկն տակ աւել մը, առանց չորս դին նայելու.) «Լարսի մուկերը յաղթանակը կ'տանին . քաղըէն կ'վանտեն գաղթող Մալա-լականները եւ այսպէս ասոնց դէմ ի պաշտօնէ բողոքելու առիթ չեն տար» : (գլուխը կ'վերցնէ) Լեցցեն Լարսի մկերը, ո՞րքան ճարպիկ են . մեր վարժապետներուն գործը կ'կատարեն . . . :

**ԱՐԲ.** (Թեկուսի) Նայէ անգամ մը, այս դղումգլուխն ալ մուկերու վրայ կ'ե-րազէ . դէմքը տնտնողը կարծէ թէ քաղաքականութեան խորքին իջած է : (Բօ-ւնաւալով մեղմիկ) Պետինն անցին անշահ սպարաւորները . . . :

**ՄՈՒՇ.** Ա՛յ, լեղիս բրնձ : (վար կ'իջնան ձեռքէն աւել ու ԹեքԹ)

**ԱՐԲ.** Ծօ՛, դուն ալ գրող կարդացող եղար . մրսի՛ գլխուղ . հիմակ աւելին կոթովն աչքը կ'հանեմ, մուկիկ, Պուշիկ . լեզուդ շարժելու տեղ՝ աւելի շարժէ : Նայէ չորս դին սա աղբերն ու աւուրը . . . շո՛ւտ, շո՛ւտ . . . Լամարս պէյը ննջարանէն իջնելու վրայ է . . . :

**ՄՈՒՇ.** Է՛յ, մի՛ պոռար, աղբեր, դեռ ժամանակ կայ . վեր վար՝ ամենքն իրենց բանը գործը նայելու տեղ՝ լրագիր կ'կարդան, եւ կ'վիճարանին . . . Մեր փոքրիկ Հիլիկ տուտուն Զաքարիկ եղբորը հետ գրաբարի եւ աշխարհաբարի համար կոկորդնին կ'սպտուն եւ կ'փետտուն . մեր Շուշան տիկինն Քազարատ տղուն հետ ձուկ ուտողին եւ կրակոտին վրայ կ'խօսին . մեր Լամարս պէյը Պուստում խորհրդականին հետ Թուաբանական հաշիւ մը լուծելու կ'աշխատի՝ ծանօթ թիւ ունենալով 16 եւ 61 . մեր Մանդուխտ սպասուհին Պփրեմին հետ՝ չգիտեմ որ Թագուհին գլխուն ճերմակ մազերը կ'ջնան համբել, որ գուշակեն թէ քաղաքը պիտի ըլլին թէ ոչ անբաղը : Հապա Լիլա-կոս ախոռապանն ալ Փշալ՝ ծիւնն Մասիսի ճամբան կը սորվեցնէ աշխարհացոյցի մը վրայ, զարին ու չուրը մոռնալով . մէկ խօսքով՝ ամենքը դուրսն են, տունը մարդ չկայ . ես ինչո՞ւ ետ մնամ, դո՛ւ ալ . . . :

**ԱՐԲ.** Ծօ՛, կատակը մէկ դի, ա՛ն, ա՛ն սա աւել . . .

**ՄՈՒՇ.** Դեռ աւելին կայ, կեցի՛ր . մէկ բանի ալ զիր ու թուղծ մրոտող պարոններ խոհանոցը նստած, որու մէկ կողմը փլած է, Գէշ-Գէշ եւ Գէշ-Գէշ ձօտերը կ'պտըլան եւ մեծ մեծ խօսքերու հետ՝ հաց ու պանիր ջարդելով՝ կը չափեն, մինչեւ որ Լամարս պէյին տեսութիւնը վայելեն :

**ԱՐԲ.** Ծօ՛, ինչո՛ւ ճամբայ չտուիր այդ հացկատակներուն :

**ՄՈՒՇ.** Է՛յ, արեւը չեւած եկան դուռը ծեղր առին . Լամարս պէյը կանչեր է . քիչ քիչ տնեցիք բողոքովն դուրս պիտի ելնեն եւ օտարները ներս պիտի մտնեն տիրանան . . . : Հապա վարը հոտած միս մը կ'սպասէ որ զարնեն, խոհարար չկայ, ալիւրը կ'սպասէ որ շաղեն, շաղող չկայ, բանջարեղէնը կ'սպասէ որ ստըկեն, կերակուրները կ'սպասեն որ եփուին, եփող չկայ . սենեակներն ալ կ'սպասեն որ ալուին, որո՛ւ փոյթ . ես եմ մնացեր պաշտօնասէր, սանն է զլորեր խուփն է գտեր : Մարոն աղբեր, կարդանք ու գրենք ամեն բան կարգի կ'մտնէ անշուշտ ինքնիրեն (Կ'սափ սեղանին առջեւ) :

**ԱՐԲ.** Լարո՞ղը տանի քեզ, Մուշիկ : Քիչ մը խելը ունիմ, այն ալ պիտի թուցնեմ : Լ'հատաւս ըսածիդ, թէ ոչ քիթէս կ'բռնես : Սկուր խելօր խօսիմք, չէ թէ զրսի՛ այլ ներսի բաներու վրայ : Ո՛ր մնացին մեր առջի տնական հանդարտութիւնն ու պարզութիւնը . ամեն մէկն իր գործն, իր պարտքը շէնքով շնորհրով կ'կատարէր ատեն մը, ուրախ գուարթ կ'ուտէր կ'խմէր ու հանգիստ բուն կ'ընանար : Հիմակ կարծես թէ ամեն օր ճամբորդ ենք . միշտ ոտքի վըրայ, միշտ վերերը կ'եկնենք, վարը նայող չունինք . տան մէջ մտնող եկնողն յայտնի չէ . ամեն բան առկծառակ, ամեն բան առուկրողին է : Պէշ, վերջը գէշ է . մեր աչքին երեւելի կայ :

**ՄՈՒՇ.** Սկուր աղբեր, սա լրագիրներուն մէջ փնտռենք պատճառը . գրուածը սուտ չըլլիր : Լարեկի է Փշալ, Արշալ, Մասալ, մանաւանդ Մաս-

որ՝ բարձր ըլլելուն, շատ աւելի հեռուն կ'տեսնէ, բացատրէ մեզի՝ թէ ինչո՞ւ համար Աամսար աղան՝ դիւանագէտ դառնալով՝ անծանօթին ետեւէն ընկեր է, ծանօթին՝ այս է իր գրատան հաշիւներն ու ընտանեկան գործերն երեսի վրայ թողլով. ինչո՞ւ համար Հիրիկն Ռուստոմին հետ շատ կ'ծռարկի, ինչո՞ւ համար ժամանակին սեղան չ'ըրուիր, ինչո՞ւ համար սենեակները չեն աւուիր . . . ինչո՞ւ համար . . .

ԱՐԲ. Ծօ՛, ա՛նօրէն, թո՛ղ այդ ինչու պինչդ . լրագիրներն ատանկ բաներ գիտե՛ն մի:

ՄՈՒՇ. Հապա ո՞վ գիտէ, պարոն լրաբեր, քանի որ անոնց երեսէն կ'ըաշենք, կ'ըսես, այս ամեն շփոթութիւնները. վերքը տուողը դարմանն ալ գիտէ անշուշտ:

ԱՐԲ. Այդ վերքն ընողը ներսէն է:

ՄՈՒՇ. Ո՞վ է:

ԱՐԲ. Մուշիկ, մօտ եկո՛ւր, բա՛ց երկար ականջներդ. կ'ճանչնաս երկար, բարակ, ոսկրուտ, կոնտ ճակատ, սրաքիթ մարդ մը . . .

ՄՈՒՇ. Ի՞նչպէս չէ. Ռուստոմը:

ԱՐԲ. Լա՛ւ, ես այդ Ռուստոմը չեմ հաշիր. սատանայ մարդ մը կ'երեւի. քանի որ մեր տան սեմը կոխեց, ամեն բան վեր վար դարձաւ:

ՄՈՒՇ. Ծօ՛, աղէկ ըսիր. հիմակ խելքս տեղ ըրաւ. ո՞ր ծակէ՞ն ընկաւ այդ մարդը, թէեւ մանրուկ ալ չէ:

ԱՐԲ. Հա՛, խոշորիկ է. բայց արջային արիսի պէս կ'ամբի, կ'սպրդի, կը սահի-ուր որ ուզես, եւ մեզի պէս հաւերոն արիւնը կ'ծծէ, առանց ցաւ տալու . . . :

ՄՈՒՇ. Իրաւ է. ծայն ծիւն չունի տան մէջ . . .

ԱՐԲ. Ինչու որ երբեմն ալ բազմոսնի ճեպուկի պէս կ'գոցուի, կ'զլորի, կը թմրի, եւ կարծես թէ մեռած սառած է: Ե՛րանես մատերուդ մէջ կ'խաղաս, անվնաս, անմեղ կենդանի մը կ'երեւի քեզ՝ ճիշտ այն պահուն որ սեւ սեւ խորհուրդներ կ'դառնան իր սեւ մաշկին տակ:

ՄՈՒՇ. Աղբեր՛, դու ալ շատ մոռ ի՛խօսիս:

ԱՐԲ. Երկար խօսելու ատեն չէ. չեմ սիրեր ես այդ մարդը. Աամսար պէ՛լին մտքին, քսակին եւ տունին մէջ կ'տիրէ բացարձակ . . . միշտակ մատակարարը չէ, խորհրդականը չէ, այլ եւ . . . եւ . . .

ՄՈՒՇ. Ուրիշ ի՛նչ է . . .

ԱՐԲ. Իր ազատիչն է եղեր. մէկ քանի անգամ կեանքը մեծ վտանգէ ազատեր է եղեր . . . գիտե՛ս ի՛նչ ընենք, Մուշիկ:

ՄՈՒՇ. Ի՛նչ:

ԱՐԲ. Մօտէն դիտենք անոր ընթացքը . . . բայց ծայներ կ'լսեմ. դու աւելիդ առ եւ գործի սկսէ . . . ես ալ թերթերը շարեմ . . . :

## ՏԵՍԻՆ Գ.

ԱՌԱՋԻՆԷ, ՉՐԲԱՐԻԿ, ՀԻՐԻԿ (Կարբէր Դանէրէ Զէր Կ'Կուէն):

ՉՐԲԱՐԻԿ. (ձեռքն ու գրպանը Թերթեր) Այս ի՛նչ հիանալի լուր է, Հիրիկ, կարդամ մտիկ ըրէ. «Ամերիկայի Թրոմպ գիւղին, Քէնկհամ փողոցին «Ա թիւ տան» ձխանին վրայ՝ այս օրերս թռչուն մը տեսնուեր է, թուական ընման՝ որ զբաւարիչպէս լեզու կ'խօսի, սակայն անթեւ է. պոչին վրայ մէկ «փոքրիկ աչք ունի, գլուխը փորին վրայ է, կտուցը միշտ բաց, եւ կ'կարծուի «թէ հովով կ'ապրի կամ օդային ճճիներով: Խսկոյն գիտուններն իմանալով կը «գումարովն եւ նոյն տան» մէջ խորհուրդի կ'նստին, որ այդ նորանշան թռչունին ծագումն իմանան: Կ'կարծեն թէ արեւելեան թռչուն մ'է, եւ գիտուն «մը կ'յանդգնի մինչեւ անգամ ըսելու թէ ընիկ Հայաստանէն է, թէ Պօլսի «մթնոլորտէն» անցնելով՝ յայն կողմերն ընկած է՝ դարման խնդրելու: Ռուսի «ընկերութիւն մը կազմելու կ'ենեն որ այդ այլափոխեալ թռչունին թեւ տան: «աչքն ու փորը տեղը բերեն եւ բնական թռչուն ընեն. մին ելեկտրական լոյս «կ'առաջարկէ, իբրեւ դարման, ուրիշ մը՝ ելեկտրական հեղուկ. ծերունի գիտուն մը, որ Տարվինեան է, կ'ըսէ թէ բուն դարմանը թռչունին ընիկ հողն «է, ոսկից ենելով այդ այլափոխութիւնը կրեր է: Ռուսի խորհուրդը վաճառակի մը մէջ դնելէ այդ թռչունն եւ Հայաստան դարձուր: (Կ'Կուէն) Ե՛ր, ի՛նչ պէս գտար այս գրուածը, Հիրիկ. իրաւի, չոսեմ յիմար, սա Ամերիկացիք շատ յանդուգն ու այլանդակ կենդանիներ են:

ՀԻՐԻԿ. Դու ես այլանդակին մեծը. գլխից կ'իսնակս՝ այդ տուտ ու մուտ գրոյցներն, որ զիս ու զբարարը ծաղրես:

ՉՐԲ. Խաչ հանէ երեսդ, գրուած է ահա, առ կարդա՛:

ԱՐԲ. (ձեռքով) Իրաւ յոր, այս ամենէ համով տուան է, այնքան լրագրական տուտերու մէջ: Ե՛րեւի թէ այդ թռչունն՝ իր ընիկ երկրին պէս, արծիւներու թեւին տակ դարման գտնել յուսալով՝ այդ անճանաչ վիճակին հասեր է:

ՉՐԲ. Զեն առներ, Հիրիկ:

ՀԻՐ. Քեզի ըլլի թերթդ, թեթեւ գլուխ. ես այդպիսի շոշորթաբանութիւններ չեմ կարդար. կ'երեւի թէ բուն կարագիրդ գտեր ես այդ նորանշան թռչունին մէջ, անթեւ, օղակու կենդանին, որու ըղեղը փորին մէջն է, ո՞վ կըրնայ ըլլի, եթէ ոչ Զաքարիկ եղբայրս:

ՉՐԲ. Ետեղիակալեմ, բուրիկ, միայն ես ոչ թուական մ'եմ լեզուիդ պէս, եւ ոչ զբաւարիչսնդ՝ գլխուդ պէս:

ՄՈՒՇ. (ձեռքով) Արբո՛ւն, վէճը հոս կ'տաքնայ, վարը կանն ու խանգն կ'պաղին . . . :

ՀԻՐ. Ի՛նչ կ'մրմուս, ծօ՛ անպիտան:

**ՄՈՒՇ.** Ըսե՛լ ուզեցի, փորրիկ սիրուն տիրուհիս, որ նախաճաշիկը պիտի պաղի:

**ՀԻՐ.** Ձայնդ կտրէ՛, պա՛ղ զաւակ:

**ՄՈՒՇ.** Գոնէ՛ գրաբար խօսիր, որ ես չհասկնամ, տիրուհիս:

**ՀԻՐ.** Մուշի՛կ . . . ի՛նչ շուտիկ տղայ է այս. երեսիս կ'զարնէ կերպով մը, որ գրաբարի պաշտպան եմ, բայց կ'խօսիմ աշխարհիկ . . . քեզմէ դա՛ս կ'առնէ արդեօք, Ջաբարիկ:

**ՉԱՔ.** Սա առած չունիմ, որ տամ, բուրիկ. երբեմն քեզի նայելով՝ կապիկի պէս՝ օրագիր կ'կարդամ, մինչեւ որ հայրս ու **Պ. Ռուստոմ** որոշեն սորվելիքս . . . կարդա՛ սա կտորը . . .

**ՀԻՐ.** Ատոր կտո՛ր ըլլիս . . . . որ կտրեցիր մտաւորիս թելը. թո՛ղ որ լմնցնեմ իմ սկսած յօդուածս:

**ՉԱՔ.** (*Ժեկուսի*) Խ՛նչ բարեկիրթ քոյր ունիմ. բանի գրող կարդացող կ'ըլլի, այնքան լեզուն կ'մարբուլի . . . :

**ՀԻՐ** (*Կ'հարգայ*) . . . **Պ.** յսպէս կ'այլափոխի հայուծիւնն. անկարելին կա՛րելի կ'լինի, անկերպարան բաները կ'կերպաւորին. Հայաստանի օղը թըռ՛ւցումներով, ջրերը ձկներով ու նաւերով, արտերը մշակներով, վանօրայքը ռուսանողներով, ամբարները ցորենով, վաճառատունները ոսկիով պիտի լե՛ցցուն, երբ Հայոց երեսակայուծիւնն սկսի սաւառնիլ քաղաքական աշխարհի ոլորտը, խուզարկել դահլիճներու գաղտնիքը, հետազօտել դաշնագիր ու պայմանագիր, գիտ, հնարք, եւ պահ մ'ամեն հին շէնք, հին նախապա՛շարմունք՝ հին եկեղեցի, հին գործիք բանդելով, թեւեր առնու եւ նոր գա՛ղափարներով, նոր գիտերով բեռնաւորուած՝ դառնայ հայրենիք, ծաւալի Վրուսով, եւ ի վերջէ **Արարատայ** սարին վրայ կանգնելով՝ վերականգնէ ինչ որ փլած է, աւերակ է . . . : **Այն** ժամանակ՝ պիտի սկսի նաեւ Հայոց **Ռուսկեղարը**, սիրտերը միայն սէր պիտի գզան, զլուխները միայն հանճարի եւ ճշմարտութեան փայլակներ պիտի շողշողան, ձեռները զափնինք պիտի ճիւղեն, իրբեւ զալարագեղ ծիածան, եւ հանութ խաղաղութեան եւ օրհնութեան փունջեր պիտի սփռին, բերանները գրաբար օրհներգներ պիտի երգեն, եւ ուղղեն առ **Հն** եւ առ հեղինակուծիւնն երկնառաք որ այս եղեմա՛կան օրերը վերադարձուցին . . . »: (*Կ'խօսի յուզուած*) **Տե՛ս**, **Ջաբարիկ**, տե՛ս, ի՛նչ սքանչելի եւ ցանկալի պատկեր. կ'տեսնեմ հեռուն այդ օրն, կը ծծեմ այդ օղը, կ'թռիմ եմերի մէջ . . . **Ա՛հ**, ո՛հ, կ'նմանի՛ այս հեռանկարն քու անհամ եւ անթեւ թռչունիդ . . . գոնէ այսպիսի բաներ կարդա՛ որ խելքդ բացուի:

**ՉԱՔ.** **Այո՛**, հովով ապրինք . . . է՛հ, բուրիկ, եթէ ոչ մտքով՝ ընթերցուածով իրարմէ կարծածիդ չափ հեռու չենք: **Այնպէս** կ'թուի որ այդ հեռա՛նկար պատկերդ իմ այլակերպ թռչունիս մեկնաբանութիւնն է: Հայաստանի զգայարանքն խանգարած, բթացած են, գլուխը փորին եւ պոչն աչքին հետ խառնուեր են: **Այդ** պիտի բուժի կ'ըսէ ամերիկացի գիտունը՝ երբ իր քնական հոգն ու խելքը գտնէ. պիտի բժշկուի կ'ըսէ քու լրագիրդ, **Կոռ** . . .

կայուծիւնը բորբորի հասնի օտար աշխարհ: Եւ ապա՛ **Արարատայ** բարձունքը թռի: **Այս** է քու եւ իմ մէջ եղած տարբերութիւնը:

**ՀԻՐ.** Խ՛նչ ապուշ ես, ա՛ղբերիկ, մե՛ղք քեզի:

**ՉԱՔ.** Ի՛նչ մը լեզուդ քեզի քաշէ, բուրիկ, թէ ոչ . . . միթէ՛ քու կարդացած թերթդ պատգամ, իմ շաղգա՛մ է. երկուքն ալ թղթի կտորներ են, եւ թղթի չափ արժէք ունին չունին:

**ՀԻՐ.** Իմս հայրենաշունչ, բուկդ դիւաշունչ է:

**ՄՈՒՇ.** (*Ժեկուսի*) Հա՛, հա՛, գրաբար կ'խօսի. ասոր վերջը հայհոյանք, ծեծ է. նայինք:

**ՉԱՔ.** Գրո՛ղը տանի լու՛նչ ալ հա՛նչ ալ:

**ՀԻՐ:** (*Ժեկուսի*) Նայէ՛ սա հաստ զուխը բան մը կ'հասկնայ. եկուր այսպիսի անբանի հետ վիճաբանէ: Պա՛րոնիկ, գիտե՛ս միթէ, որ իմ ընկերուհիներս են սովորաբար մեծ մեծ հանճարներ: Սա կ'կարդամ միշտ **Մէվլինէ**, **Ժօրժ Սան**, **Ժիրարտէն**, **Մղայէլ** . . .

**ՉԱՔ.** Մղայէ՛լ, դո՛ւ ես, բերանս մի՛ բանար, հիմակ ամեն բան դուրս կ'իջարկեմ, բուրիկ, ետքը կ'զղջաս:

**ՀԻՐ.** Բերանդ ետեղ դառնայ, ա՛նպիտան, ի՛նչ ունիս ըսել. դու մարդ ըլլելիք չունիս. այսօր ալ քուռակ մ'ես վաղն ալ:

**ՉԱՔ.** Եթէ՛ ես քուռակ եմ, դու ալ քուռիկ ես:

**ՀԻՐ.** Հա՛, հէ՛, հի՛ . . . ի՛նչ ապուշ:

**ՉԱՔ.** Հի՛, հի՛, հէ՛ . . . ի՛նչ նու, նու:

**ՀԻՐ.** Ծօ՛ սո՛ւս, հիմակ սուրս կ'հանեմ (*Դրե՛լ մը կ'առնու ձեռքը*):

**ՉԱՔ.** Վա՛յ, վա՛յ, փետուրէ սուր. — Ռո՛ո՛ սիրտը պիտի մխես, բուրիկ. միթէ իմ ձեռքերս բանջա՛ր կ'հարեն. արդէն բաւական սուր է լեզուդ եւ երեսդ: Ետտ մի՛ բարկացներ զիս, հիմակ այդ լեզուդ կ'կտրեմ:

**ՀԻՐ.** Խ՛նչ ըսիր, մազիս թելին անգամ չես կրնար դպչիլ. քու աչքերդ կը փորեմ հիմա (*Կ'մօտի ձեռքը վերցուցած*). իմ սուրս ու թուրս գրիչս է, գիտե՛ս, խենդուկ պարոնիկ. թէ որ ուզեմ, արարատ աշխարհ կ'վկայէ, քեզ խայտառակ կ'ընեմ. բայց ի՛նչ կ'հասկնաս դու զրչիս զօրութենէն: **Եթէ** կոյրը լուսէն եւ խուլը դաշնակէն բան մը կ'իմանայ, դու ալ կրնաս իմանալ իմ բարձր խելքս եւ ճանչել զրչիս յարզը: Նայէ՛ սա լակոտիւն, մարդ եղեր է եւ ինձի հետ վիճաբանիլ կ'ուզէ. կորիր գնա՛, դու գնա՛ եւ մառանը խառնէ՛, շարալ գողցիր ու կե՛ր . . . գնա՛ . . . :

**ՉԱՔ.** Ի՛նչ չափը կ'անցնես . . . հիմակ մազերդ կ'փետտեմ . . . :

**ՀԻՐ.** Բերանդ չորնայ . . . :

**ՉԱՔ.** Ըսե՛մ, ըսե՛մ . . . դու ալ գիշերներն . . .

**ՄՈՒՇ.** (*առ Աբբուս*) Մղբե՛ր, գործը գէշնալու վրայ է. առջեւն առնենք. (*Հերեկին*) Նագի՛կ տիրուհիս, վարը խաճվէն ու կամք սառեցան. հրամայե՛ք, սեղանը պատրաստ է . . .

**ՀԻՐ.** (*առ Մուշիկ*) Գետինն անցնի կամն ալ, կամնարերն ալ . . . կորի՛ր . . . անթրէն:

ՋԱՔ. Քսեն, քուրիկ, զիշերները դու չե՞ս գողնար . . . պա՛. . . պա՛. . .

ՀԻՐ. Պա՛. . . պանծէ՛, ծօ՛:

ՋԱՔ. Պա՛. . . պա՛. . . ձեռքս պաշ ըրէ որ չըսեմ . . .

ՀԻՐ. Պա՛ ընեմ . . . մէյէր մեռնիմ . . .

ՋԱՔ. Լաւ ուրեմն . . . պա . . . պա . . . ըսի, կ'ըսեմ կոր . . . (ձեռքը կ'երկնցընէ) դու չե՞ս զիշերները պաշիկ գողցողը . . . :

ՀԻՐ. Կայծաղներու գաս, անամօթ . . . :

ՋԱՔ. . . մամային երեսներէն, որ ք--ք-- գողնաս եւ քօւտքէ. . . արդեօք սուր գրիչդ քօւտքէ-ք մէջ կ'ընթափես եւ ք--ք-- մեղա՞նդ կ'չորցընես . . . ըսէ՛ . . . հասկցո՛ւր ինձ . . . :

ՀԻՐ. Երեսիդ ջուրն ուտես, թեթեւօրիկ:

ՋԱՔ. Պատասխան տուր. նախատինքը պատասխան չէ:

ՀԻՐ. Պենա՛ առջեւէս, շոշորդ:

ՋԱՔ. Որո՞ւ շոշորդ կ'ըսես, հի՛մա (ձեռքը կ'երկնցընէ) բերանդ կ'պատուեմ . . . :

ՀԻՐ. (կ'պոռայ) Է՛, է՛յ, հասէ՛ք . . . պիտի խղզէ զիս . . . մա՛մա, պա՛-պա . . .

ՋԱՔ. Նայէ՛, նայէ՛ ի՛նչ վիվիլով կ'հանէ (ետ ետ կ'բաշտէ) լալկան տուտուն, Ես քեզի ետքէն կ'հասկցնեմ:

ՀԻՐ. (Հայելին առջև մազերը կ'շտէ) Կեցի՛ր, դու անպիտան, պապային ըսեմ պիտի. այն հ-ե-ք կ'զայ (դուրս կ'երնէ լալով, ետեւէն կ'վազէ Ջաքան բիկ սպառնալի ձեռքօք. դուրսն աղաղակներ):

## ՏԵՍԻԼ Գ.

### ԱՐԲՈՒՆ Լ ՄՈՒՇԻՎ:

ՄՈՒՇ. Այս ի՛նչ բարեկենդան է. եկուր մենք ալ պարենք, Արբուն. (Արբունին մէջքը կ'բռնէ) օ՛ն, ընդ առաջ . . . մէկ ետեւ . . . մէկ առաջ:

ԱՐԲ. Թո՛ղ, ծօ՛, յիմա՛ր ես, ո՛վ պիտի զրէ Կամասար պէյլին նամակներն աշխարհիս ամեն դիւաններու հետ թղթակցութիւն ունի . . . :

ՄՈՒՇ. Ես ալ աւելովս կ'պարեմ. (կ'պոռէ):

ԱՐԲ. Ծօ՛, մարդ կ'զայ. Պ. Քաղաքատն է. իրաւ, այս մա՛րդ է . . . մի՞-նակ ասոր գլուխը տեղն է:

ՄՈՒՇ. Շրջան մ'ալ ընեմ, լա՛, լա՛, լա՛ . . .

## ՏԵՍԻԼ Ե.

### ԱՌԱՋԻՆԷ Լ ԲԱԳՆԱՐՑ:

ՔԱՎԱՐԱՍ. (ծանր ծանր Լ տխուր ներս կ'մտնէ՝ սոյն միջոցին որ Մուշիկ շփոթած անկիւն մը կ'բաշտէ՝ աւելը վեր բռնած) Այս ի՛նչ խայտառակութիւն, ի՛նչ վայնասուն է . . .

ՄՈՒՇ. Տէր Քաղաքատ, հազա՛ր ծաղիս. ձեզ տեսնելով՝ ուրախութենէս սկսայ ցատկըս. ձեզմէ գատ մարդ չկայ տունը. Թէ որ դուն ալ չըլլէիր, շատոնց կ'ծիկը դրած էի . . .

ԲԱԳ. (բո՛ւրբաղով) Ամսականդ ա՛ն, հանգիստ նստի՛ր կամ օրագիր կարդա՛. ամենքնիդ ալ դիւանագէտ եղեր էք:

ՄՈՒՇ. Ես դիւանակուտ չեմ. ես հ-ք-ք ք-ք չեմ սիրեր:

ԲԱԳ. Քիչ մ'առաջ ո՛վ կ'լար կ'ողբար այս տեղ, Մարբուն:

ԱՐԲ. Զաքարիկ եւ Հիւրիկ անուշ անուշ կ'խօսէին եւ կ'կարգային, երբ իրենց մէջ անթեւ թռչնի եւ թռչնակի կռիւ մ'եղաւ, այնպէս որ սկսան զիրար փետտել . . .

ՔԱԳ. (աբաւա՛ր) Ի՛նչ անշնորհ քոյր եւ եղբայր: Այսպէս իրարու հետ՝ ամեն օր, շուն ու կատու են. մին իմաստակ աղջիկ, Թէեւ դեռ մելան կ'լնէ, միւսն անտաշ եւ գոռոզ չարահայտ: Քոյրս գրագէտի հովեր կ'առնէ, եղբայրս չէ-չէ: Իրաւի՛ սա լրագիրներն տան մէջ պատիժներ դարձած են, եւ միշտ կռուի եւ գծողութեան պատճառ: Քոյրս ու եղբորս այս վէճն որ՝ եթէ վրայ չհասնէի, ծեծով պիտի վերջանար, ամեն օր կ'կրկնուի, քանի որ օրագիրներն ու լրագիրները կ'խառնուին: Շարագիրներն ալ ուրիշ բան չեն ընեն: Մի՛ն խնդրոյն պոչէն կ'բռնէ, միւսը՝ զլխէն, եւ կ'սկսին քաշել, այնպէս որ, բուն խնդիրն, Թէեւ երբեմն խնդիր ըսուելու տեղ չունի, մէջ կ'խաղայ, եւ կ'մնայ թակոյն, զոր կ'կրծեն ու կ'կրծեն մրմուռով եւ իրարու ակռայ կ'ցուցնեն: Ոմանք իրենց մօրուքն, այլք իրենց զուխը վրայ կ'տան. իսկ ընթերցողներն մօրուք փետտողներուն կողմն են, վասն զի աւելի խնդալ կը սիրեն քան Թէ բան սորվիլ: Մի՛ս՝ հրապարակի վրայ կրնայ տարուիլ, բայց երեւակայէ ծագած մը երբ բանակուին ընտանիքի մէջ կ'մտնէ: Ա՛յ հանգիստ կայ, ոչ խաղաղութիւն. կարծեաց տարբերութեան հետ, անընտրող մտաց մէջ, կ'սկսին հակառակութիւն, դառնութիւն, սիրտխաղ: Գոնէ տան զուխը հաստատ սկզբունք եւ բնութեան ունենար. է՛հ, չէ՛. ամեն մէկն իր սիրական կամ պատահական գաղափարն ունի, որ այլ եւ այլ օրագիրներու արձագանքն է: Մի՛ն հիւսիս, միւսը հարաւ, այս արեւմուտք կ'նաւարկէ խելքին առագաստը բացած՝ եւ՝ փոթորկի հանդիպելով՝ ի զուր Մարեւելք կ'փրկուէ: Կենայիս որ այս լրագիրը Գերմանիոյ շնորհը կ'իջէ, այն՝ Մանգլիոյ շնորհը, միւսը Շրանասիի թմբուկը կ'զարնէ, ուրիշ մը Ռուսիոյ քաղաքը:

խակ Հայաստանի հովուական տիկը փչող չկայ: Այսպէս հրապարակի բա-  
բելոնը տունը կ'փոխադրուի, մանաւանդ երբ Բէլ մը զայն բաժնելով տիրա-  
պետելու կ'դաւադրէ:

ԱՐԲ. (Ժեկուսի) Ի՞նչպէս հասկցեր եմ, հա՛, Մուշիկ:

ԲԱԳ. Նոյն միջոցին մի՛ հարցնեք թէ ի՞նչպէս կ'կատարուին տնային գոր-  
ծեր. հայրն ի՞նչ, մայրն ի՞նչ կ'գործեն, ոչ ոք զիտէ . . . խորհրդատու ամ-  
պի մը մէջ են, վարի ողբն ու կոծը չեն լսեր: Ծիծկեր մանկիկը կ'ողբայ,  
կամ կ'ուզէ, տուող չկայ. տղան բոպիկ՝ հովին ու անծերէին տակ շրջելով կը  
սրսփայ, հագցնող չկայ. տան վարժապետն ու երէցը կ'երթան կ'զան ստակ  
կ'ուզեն, վճարող չկայ. արտ եւ ագարակ անմշակ կ'մնան, հերկող չկայ.  
աղտեղութիւնն ու աղբերը կ'շրջապատեն մեզ, մաքրող չկայ:

ՄՈՒՇ. (Ժեկուսի) Այս ալ մեզի բար է, հէ՛յ:

ԲԱԳ. Ահա այս է համառօտ՝ մեր տան նկարագիրն: Լրագիր ու քաղա-  
քական խնդիրներ՝ այս օրին բերին մեզի: Մակայն այս շփոթութեան մէջ՝  
մին կ'երագէ նոր աշխարհ, ուրիշ մը կ'երգէ նոր ծիածան, այս Արարատայ  
սարին վրայ Հայոց տապանը կ'փնտռէ, այն Արտաւազդայ շղթաներն պըն-  
դացնող կռաններն. ուրիշ մը Նփրատ ու Տիգրիսը Միջերկրականի եւ Սեւ  
ծովու հետ կ'միացնէ, իսկ հայրս Լամարաղան կամ պէ՛յը՝ ի՞նչ փառասի-  
րութիւն ունի դեռ լաւ չգիտեմ: Աւասիկ նորէն սեղանին վրայ շարուած են  
երկպառակութեան խնձորներն: Տուն չէ այս, այլ լրագրարան, վիճարան:  
Որքան գլուխ՝ այնքան խորհուրդ: Չեւքէս զայ՝ բոլորն ալ կ'այրեմ: Ա՛յ  
այն ընտանիքին որու առաջնորդներն այս տեսակ օրագիրներն են: Ուրիշ տեղ  
օրագիրները կ'ներշնչուին ընտանեաց նիւթական եւ մտային պիտոյրէն,  
կեանքէն, այս տեղ սնափառութենէ, շահամոլութենէ, որոց հետեանքն է  
ճշմարտութիւնը ծածկել, անկանոն կիրք, սովորութիւն՝ գգուել եւ մարդիկը  
խաբել: Օրինակը ձեր տունն է. Լամարա հայրս նշաւակ եղած է լրագիրնե-  
րու ներբողին: Անշուշտ իր խորհրդական Ռուստոմն է անոնց գրչին թելերը  
շարժողը, որ իր նպատակը պիտի ունենայ: Խեղճ հայրս, վահառական էր,  
քիչ շատ արթուն, հողատէր էր, բաւական ճարպիկ, հիմա դարձած է քա-  
ղաքագէտ, բայց այս իր գործը չէ: Ի՞նչ միտք ունի՝ պիտի ջանամ հասկը-  
նալ, իր աչքը բանալ եւ մեր տնական վիճակը նկարագրել: Ահա՛ կ'գայ:

## ՏԵՄԻՆ Զ.

ԱՌԱՋԻՆՔ Լ ԿԱՄՍԱՐ:

ԿԱՄՍԱՐ. Քաղաքա՛տ, դուն հո՞ն. կ'երեւի թէ դու ալ սկսար օրագիրնե-  
րը խառնել . . . նոր բան մը կ'այ, իմ վրայ ակնարկ մը կ'այ . . . է՛յ, չե՞ս  
խօսիր. երեսդ ինչո՞ւ կ'ախեր ես:

ԲԱԳ. Հայր իմ, դժգոհ եմ . . . համարձակ խօսի՛մ, ես այդ բռնած ճամ-  
բաղ չեմ հանիր:

ԿԱՄ. Ձե՛ս հանիր. ի՞նչ դժուարահաւան պատանի ես, զիտեմ. սակայն  
ամեն մարդ, օտարներն անգամ, կ'հանին իմ մեծ գաղափարս, լրագիրները  
կ'փառաւորեն զայն, նոյն իսկ Ռուստոմ, որ պարապ մարդ չէ, երկինք կը  
հանէ . . .

ԲԱԳ. Որպէս զի վերջը բեզ դժոխքը զօրէ . . .

ԿԱՄ. Ի՞նչ ըսել կ'ուզես, Պարո՛ն Քաղաքա՛տ:

ԲԱԳ. Մա ըսել կ'ուզեմ, որ Ռուստոմ, բարեկամի դէմքով, օժ մ'է, որ  
բոլոր կեանքը պիտի թունաւորէ:

ԿԱՄ. Խա՛ջ հանէ երեսդ. յիմա՛ր ես, տղայ՛: Լուծիւն, չլսէ այդ խօսքդ,  
շատ պիտի վիրաւորուի: Ռուստոմ պատուաւոր մարդ է. իմ խորհրդականս  
եւ մատակարարս է, մեր շահուն եւ պատուոյն ջերմ պաշտպանն է: Իր խոր-  
հուրդները մեծ, լուսամիտ մարդու խորհուրդներ են, որոցմէ կ'օգտիմ:

ԲԱԳ. Մա՛ք բա՛ց, հայր, աչքդ բա՛ց, ես այսչափ կ'ըսեմ: Քեզ կ'խա-  
բեն, եւ մոխրի վրայ պիտի նստեցնեն:

ԿԱՄ. Ի՛մ աչքերս բաւական բաց են, եւ բու աչքերէդ աւելի հեռու կը  
տեսնեն: Կ'տեսնեն Լամարականաց ազգատոհմն՝ որ՝ աշխարհի եւ Պատ-  
մութեան մէջ՝ նոր լոյսով եւ փառքով պիտի փայլին, եթէ Ռուստոմի քեզի  
ի գործ դնեմ:

ԲԱԳ. Պարծեա՛լ ծրագիր. արդէն այդ նոր նոր ծրագիրները Ազգին տու-  
նը պիտի քանդեն՝ առանց շինելու: Մա՛քերդ սուր են, հայր, բայց չեն տես-  
ներ, որ բանի Ռուստոմին հետ՝ այդչափ սերտիւ կ'տեսնուիս, գործերդ ծուռ  
կ'երթան, հողերդ կ'ծախուին, գանձդ կ'կողոպտուի, տունդ աւերակ կ'դառ-  
նայ, որու վրայ օրագիրները բուերու պէս պիտի երգեն: Ջաքարիկ տղադ  
անուս եւ անկիրթ կ'մնայ, աղջիկդ օրէ օր վրայ կ'դնէ: Խմաստակութեան կող-  
մէ . . . ո՞ր մէկն ըսեմ. չէ թէ օրագիրներն, որ Ռուստոմի վարձկան թըմ-  
բուկներն են, այլ միթէ խիղճդ կ'վկայէ՞ թէ բու հայրական պարտքերդ կ'կա-  
տարես: Համեստ եւ պատուակիր վահառական էիր, հոգասէր եւ գթած հայր,  
խոհեմ եւ բանիբուն հայրենասէր, իսկ հիմա փառամոլ, բաղախնդիր մարդ  
մը դարձեր ես, եւ այնպէս կարծես թէ Լամարականաց գերդաստանը փա-  
ռաց պսակը պիտի ընդունի. եւ որո՞ւ ձեռօք, անծի մը, գրեթէ օտարի մը  
ձեռօք ո՞ր առջեւ որոգայթ կ'լարէ, անոր վրայ վարդեր սփռելով:

ԿԱՄ. Ո՛րչափ յոռետես ես. գէշ օրդ է այսօր: Կ'երեւի թէ երէկ զիշեր  
տխուր երազներ տեսար: Մի՛ վախնար, Քաղաքա՛տ, չհատնիր գանձս, եւ  
մեռնելէս ետը՝ բաժինդ կ'ստանաս . . .

ԲԱԳ. Մա՛յրպէս ծուռ կ'մեկնես ըսածս, հայր: Ո՛րքան անիրաւ ես: Ես  
ունեցածիդ աչք չունիմ բնաւ. միայն կ'խնդրեմ որ՝ իբրեւ տան զլուխ՝ կար-  
գի կանոնի դնես տունդ . . .

ԿԱՄ. Է՛հ, առաջ պէտք է որ Ռուստոմի ծրագիրը գործադրեմ, վերջն՝  
ամեն բան կարգի կ'մտնէ:

ԲԱԳ. Ի՞նչ ծրագիր է այդ:

ԿԱՄ. Այդ գաղանիր է: Առ այժմ երկու խօսք միայն կրնամ ընել, որ

հանդարտի կատակածող միտքդ: Ծրագրին նպատակն է՝ գտնել մերենայ մը՝ որ **Լէման** լիճը **Արշարուն**եաց գաւառը, **Կամսարական**եաց այս բնիկ հողը՝ փոխադրէ, որպէս զի այդ հողն արգասաւորի ու ծաղկի, եւ ես՝ իբրեւ հին ժառանգորդ այդ երկրին, երթամ ընտանեօք բնակիմ . . .

**ՄՈՒՇ.** (ձեկուսէ) Զրսի՞ որ մեր **Կամսար** աղային խելքին եկեր է . . .

**ԿԱՄ.** Վսեմ չե՞ս գտներ այս գաղափարս, **Քաղարատ**, եւ միթէ ասոր մօտ գծում եւ աննշան բաներ չե՞ն երեւիր տնային մանր մունր գործեր եւ պատահական կոխներ: **Սրբ** միանգամ **Լէման** հայ լիճ դառնայ, մեր երջանկութեան դուռը կ'բացուի: **Ուստի** սիրտդ քիչ մը լայն բռնէ, եւ ամեն բանի վրայ մի՛ մրմռար: **Պիտեմ**, քիչ մը մելամաղձիկ ես. եթէ հոս կ'ձանձրանաս, քեզ **Սարուպա** դրկեմ:

**ԲԱԳ.** Քիչէ՞ր ճամբել կ'ուզես զիս, հա՛յր: **Քայց** ե՛ն, թէ ոչ դու երազ կը տեսնես: **Պիտի** մնամ որ տեսնեմ այդ հրաշալի մերենան. ո՛վ պիտի գտնէ զայն . . .

**ԿԱՄ.** **Ռուստոմ** . . . քիչ մը ցած խօսէ, չլսեն քովիներդ . . .

**ԲԱԳ.** **Արդէն** շատերը կ'խօսին այդ այլանդակ խորհրդիդ վրայ . . . մեր **Արշակ** **Ք** ին մերենան, այսինքն սուրը չլինի այն, որ **Կամսարական**եաց ցեղին հետ՝ իրենց ժառանգական հողն ալ ջնջեց զրաւեց: **Ս**,յդ մերենան շատ սուղի պիտի նստի քեզ, հա՛յր, քչքո՞ք բա՛ց. ծուղակ մը կ'նշմարեմ անոր մէջ:

**ԿԱՄ.** (ձեկուսէ) Ի՛նչ պինդգլուխ մարդ: (առ **Քաղարատ**) **Ռուստոմ** անկեղծութեան եւ արդարութեան տիպար մ'է . . . եւ քեզի բան մ'ըսեմ, **Քաղարատ**, հաստոտ միտքս դրած եմ նպատակիս հասնիլ կամ մեռնիլ: **Ստ** չեմ դառնար. շիտակ պիտի քալեմ եւ առջեւ ելած քարը պիտի ոտքիս տակը ճզմեմ. զգոյշ եղի՛ր . . .

**ԲԱԳ.** Եա՛տ աղէկ. ես իմ պարտքս կատարեցի. զիտեմ ես քչիդ փութ մ'եմ . . . ուստի կ'բաշտիմ: (Կ'ձեկէ)

## ՏԵՍԻՒ Ի.

ԿԱՄՍԱՐ, ԱՐՔՈՒՆ Լ ՄՈՒՇԻԿ:

**ԿԱՄ.** Հեռացիր զնա՛, որո՞ւ փոյթ. ետքէն պիտի մօտենաս քովս, ապա- ջնորհ որդի: (առ **Արքուն** Լ **Մուշիկ**) **Պ**ուք ալ, ա՛նպիտաններ, ինչո՞ւ կեցեր էք. լրտեսութիւն կ'ընէք. չըլլի որ մերենային վրայ խօսք մ'ըսէք դուրսը . . .

**ՄՈՒՇ.** Տէ՛ր իմ, ես կ'ալէի, երբ կ'խօսէիր, չլսեցի, վկայ՝ այս աւելս:

**ԿԱՄ.** **Կորի՛ր**, ալելու պէտք չկայ . . .

**ՄՈՒՇ.** Ո՛հ, ի՛նչ **Կէ**. **Կամսարական**եաց երկիրն աւել չկա՛յ, տէր իմ:

**ԿԱՄ.** **Լեզո՛ւդ** բրթի . . . հոս ալելու պէտք չկայ, ըսի, ճամբորդ ենք:

**ՄՈՒՇ.** Հա՛, մոռցայ, տունէն կ'կրուիք, տէր իմ. շատ աղէկ կ'ընէք, հոս նստելու տեղ չկայ . . . լրագիրներն ու լրագրապետները բռներ են ամեն կողմը. (ցատկոտեւով) նա՛ աւել չկայ . . .

**ԿԱՄ.** Հապա դուն ի՛նչ ըրիր, **Արքուն**. նամակները պատրա՛ստ են. բեր որ ստորագրեմ:

**ԱՐՔ.** Ձեր հրահանգին կ'սպասեմ, որ գրեմ:

**ԿԱՄ.** Հրահանգը գնա **Ռուստոմ**էն ա՛ռ, եւ շուտ շուտ գրէ:

**ԱՐՔ.** Եա՛տ լաւ: (Կ'պատրաստուի գուրս ելնել)

**ՄՈՒՇ.** (առ **Արքուն**) **Սրեմ** ամ աւելիս կոթը կտրեմ, դուն ալ զրչիդ քիթը կտրէ: (Կ'ձեկէն)

## ՏԵՍԵՐԻՒ Ը.

ԿԱՄՍԱՐ:

**ԿԱՄ.** Ո՛ւ՛ֆ, զլիսացաւ զնաց (լրագիրները՝ սեղանին վրայէն՝ կ'առնէ կը բանայ՝ ու կ'գոցէ): Ի՛հ, ճշմարիտը, աղուոր առուտուր է լրագրութիւն: **Ռուկի** կ'առնեն, զովեստ, հով, մուխ կ'տան մեզի. **Ռ**՝վ անունս կ'յիշէր լրագրի մէջ՝ երբ վաճառական էի. հիմակ որ բաղաբական ասպարէզը մտայ՝ ի՛նչ որ ընեմ կ'գրեն: Հազար ապսպրէ, պարապ է: **Կամսար** պէյն այս ըրաւ, այն ըրաւ, **Կամսար** պէյն հաւկիթ կերաւ, **Կամսար** պէյն քիթը խնչեց, **Կամսար** պէյն հա՛ կլլեց, **Կամսար** պէյն փորը ցաւելուն՝ չգիտեմ ո՛ւր գնաց . . . որ օդ փոխէ . . . Ի՛հ, ա՛լ բաշելիսս չմնաց. ի՛նչպէս շարժիմ չգիտեմ: **Վ**՝վախնամ մինչեւ անգամ կնկանս երեսը նայելու . . . համբան ալ տեսակ մը գերութիւն է . . . մեծ մարդ ըլլելն ալ տանջանք է . . . ի՛նչ ընենք . . . (Ժաճացցը կ'նայի) **Քայց** **Ռուստոմ** ուշացաւ, աւտու կանուխ գնաց. կարեւոր լուր մ'ունէր ինձ հաղորդելու . . . երթամ . . . անշուշտ լրագրապետներն ալ վարը կ'սպասեն որ շարժումներս նկարագրեն . . . ես ալ փայտի պէս, այսպէս պիտի քալեմ, եւ անոնց երեսը չպիտի նայիմ . . . բայց վարը ի՛նչ աղմուկ կայ . . .

## ՏԵՍԻՒ Թ.

ԿԱՄՍԱՐ Լ ՄՈՒՇԻԿ:

**ՄՈՒՇ.** Տէ՛ր իմ, **Զաքարիկ** եւ **Հիրիկ** իրարու աչք կ'հանեն:

**ԿԱՄ.** Ինչո՞ւ . . . ինչո՞ւ . . .

**ՄՈՒՇ.** Հապէշխտանի **Թազաւորին** աղջկան աչքերուն համար . . .

**ԿԱՄ.** Ի՛նչ ըսել կ'ուզես, ա՛նպիտան:

**ՄՈՒՇ.** Հա՛, **Հիրիկ** կ'ըսէ թէ՛ Հապէշխտանի **Թազաւորին** աղջիկը սեւ աչքեր ունի. **Զաքարիկ** կ'սնդէ թէ կարմիր են . . .

**ԿԱՄ.** Ծօ՛ խեղճ ես. կարմիր աչքեր կա՞ն: (ձեկուսէ) Ի՛նչ շուտիկ տղայ է **Զաքարիկ**:

**ՄՈՒՇ.** (ձեկուսէ) **Կարծեմ** մեծ խնդիր է այս, որմէ պիտի լուծուի մեր բաղլը:



# ՏԵՍԵՐԻԼ Ժ.

ԿԵՄԵՐ Է ԿԵԴՄՈՍ:

ԿԵԴՄՈՍ. Բարեւ, իմ հին ընկեր, Կամար աղաս:  
 ԿԵՄ. (ձեկուսի) Ու՛ր, այս գլխացան ալ ո՛ւսկից ելմէ: (առ Կաղմոս) Բա-  
 րեւ . . . ի՞նչ կայ:  
 ԿԵԴ. Ս. ոտող չեմ:  
 ԿԵՄ. Ես առողջ չեմ:  
 ԿԵԴ. Ս. սո՛ր համար շուկայ չես իջնար. քեզ տեսած չունիմ:  
 ԿԵՄ. Ծովան գործ չունիմ:  
 ԿԵԴ. Բժիշկն ի՞նչ կ'ըսէ:  
 ԿԵՄ. Ս. ստուած քեզ գլխացաւէ պահպանէ, կ'ըսէ, Կաղմոս աղա:  
 ԿԵԴ. Գլխի ցա՛ւ ունիս: Ուրեմն ինչո՞ւ վարը կ'պոռան կ'կանչեն. ես  
 կարծէի թէ հանդէս կայ տունդ:  
 ԿԵՄ. Բէ՛հ- չեմ ուզեր. ես եմ տանս տէրը:  
 ԿԵԴ. (չբաւական թուելով մը հանելով) Ս. նշուշ, այս ստորագրութեան ալ  
 տէրն ես:  
 ԿԵՄ. Հա՛, տէրն եմ, տէրն եմ. (Կ'Կաղմոս, մընչեալ ծայրէն բռնած է  
 Կաղմոս) «Ս. յս մուրհակս բերողին կամ հրամանին պարտիմ վճարել հինգ հա-  
 զար ոսկի»: Բայց, Կաղմոս՝ աղա, այդ կլորիկ հեղին ոսկիները լուրիա կամ  
 չե՞ս չեն որ տուարակի մը մէջ տունս պահեմ:  
 ԿԵԴ. Ուրեմն ե՛րբ եւ ո՛ր գամ:  
 ԿԵՄ. Բի՛շ օրէն, Սրախսածոր . . .  
 ԿԵԴ. (ձեկուսի) Ի՛նչ կ'երգէ. խնձոր՝ . . . խելացնոր է այս մարդը:  
 ԿԵՄ. Է՛, երբոր մերենան գայ:  
 ԿԵԴ. (ձեկուսի) Վախմամ ուղեղի հիւանդութիւն ունի: (առ Կամար) Ի՛նչ  
 լեզու կ'խօսիս, բարեկամ. խնձոր, մերենայ, ի՛նչ գործ ունին իմ առնելիքիս  
 հետ:  
 ԿԵՄ. (ձեկուսի) Ի՛նչ կարճամիտ մարդ. իր պաշտածը ստակն է, քարն  
 է: Ուրիշ մտտուր չունի . . . (առ Կաղմոս) Սրանի՛ քեզ, միամիտ մարդ.  
 աշխարհ փլի, հողդ չէ. բաւական է որ ոսկիդ ծոցիկդ ըլլի. չունիս փռու-  
 սիրութեան որդն որ սիրտ կ'կրծէ, չունիս հայրենասիրութեան եռանդն որ  
 նոր հորիզոններ կ'բանայ աչքին, չունիս (Կաղմոս ապուշ ապուշ կ'նայէ) այն  
 խանդն ու մանդն որ թեւեր կ'տայ . . .  
 ԿԵԴ. (ձեկուսի) Իրա՛ւ, խենդ ու մենդ կ'խօսի . . . ի՛նչ բան է այս . . .  
 կ'զառանցէ . . . գլուխն հիւանդ է. գէշ ժամանակ ընտրեցի գալու . . . մարդ  
 ալ չկայ . . . (Մուշիկ հանգիստ պոռաւով)

# ՏԵՍԵՐԵՆ ԺԸ.

ԿԵՄԵՐ, ԿԵԴՄՈՍ Է. ՄՈՒՇԻԿ:

ՄՈՒՇ. Կամար պէ՛յ, պատրաստ են զգեստներդ ու սեւ ծիւն . . . շո՛ւտ  
 շո՛ւտ . . .  
 ԿԵԴ. Պէ՛յ, պէ՛յ . . . մեր Կամար աղան, պէ՛յ . . .  
 ԿԵՄ. Սրե՛նա բարեւ, Կաղմոս աղա. գործ ունիմ . . .  
 ԿԵԴ. Է՛ իմ գործ չէ՞. տաս հազար ոսկին՝ որ մեր ընկերութենէ ինծ ըն-  
 կած օրինաւոր բաժինս է, գործ չէ՞:  
 ԿԵՄ. Ձնչին բան, իմ մեծ ձեռնարկիս մօտ. (պոռաւով) Թո՛ղ, Թո՛ղ գայ  
 մերենան եւ հետդ կ'խօսիմ . . .  
 ԿԵԴ. Իրաւ որ հիմակ ես ալ պիտի խնդրեմ . . . կամ պիտի պոռամ:  
 ՄՈՒՇ. Եթէ պոռալով կրնաս վճարուիլ, ազատ ես ամենէ բարձր ծայնդ  
 հանել: Բայց Կամար պէյն, կ'ղիտես եա՛, մէկ ծայնի, մէկ հաստատ գա-  
 ղափարի համար ականջ ու միտք ունի, ուրիշ բան մտիկ չընէր. ուստ ըրած  
 է գործ չտեսնել, մինչեւ անգամ ձեռքը բերանը չտանիլ, Թող թէ արկղին,  
 մինչեւ որ իր խորհուրդն, իր մերենան, որ Սրախսածորը Լէման պիտի դար-  
 ծնէ, մարմին չառնէ . . . Եայէ՛ ինչպէս խորունկ կ'մտածէ . . .  
 ԿԵԴ. (ձեկուսի) Տէ՛ր Ս. ստուած, այս տեղ միայն լե՛հ, խնձոր ու տանձ  
 կ'խօսին . . . վերջին փորձ մ'ընեմ: (առ Կամար) Կամար՝ աղա, ո՛ր ես.  
 կուտերս պիտի տամ:  
 ԿԵՄ. Սրբ Սրշարունեաց երկրին մէջ իմ մերենաս հաստատեմ, պիտի  
 անմահանամ. պիտի լարուին ամեն տոհմային ոյժեր . . .  
 ԿԵԴ. (ձեկուսի) Հէ՛յ վախ, պիտի մեռնիմ . . . գացին կուտերս . . .  
 Կամար՝ աղա, խելքդ գլուխդ ժողվէ՛, ես լօ, լօ, լօ, չեմ հասկնար . . . կու-  
 տերս . . .  
 ԿԵՄ. Է՛յ, պատրաստ են, Մուշիկ . . .  
 ԿԵԴ. Համբէ՛, ուրեմն . . .  
 ԿԵՄ. Զգեստներս, ծիս, կառքը . . .  
 ՄՈՒՇ. Հա՛, տէր իմ, պատրաստ են:  
 ԿԵՄ. Օ՛ն, երթանք. մնաք բարեւ, հանգիստդ նայէ, Կաղմոս աղա . . .  
 Բայց նորէն ծայներ կան, նորէն գլխացաւ պիտի ունենամ. ո՛ր կ'գայ, Մու-  
 շիկ, շո՛ւտ, ելնենք . . . (Հերիկ վազելով Է Լաւով հօրը գերեզ կ'ընայ):

## ՏԵՍԻԼ ՓԲ.

ԱՌԱՍՏՈՒՄ, ՀՐԻՒԿ և ՁԱՔԱՐԻԿ:

ՀԻՐ. (Մշա լաւով) Հայրիկ, դու կտրէ մեր դատը . . . ես պիտի մեռնիմ . . .

ԿԱՄ. Հիմա ատենը չէ, աղջիկս. դեսպանատունը կ'սպասեն ինձ. ետքը, ետքը. հիմակ գացէք: (Կ'բացէ)

ՁԱՔ. Ձե՛ս հարցնեմ, հայրիկ, թէ ի՞նչ է այս խենդուկին դատը:

ՀԻՐ. Պո՛ւն ես խենդուկ. ա՛լ բաշելիքս չմնաց այս Ձաքարիկին ձեռքէն: Ես պիտի մեռնիմ . . . չթողուր որ բանաստեղծ ըլլիմ . . .

ԿԱՄ. (Մեկուսի) Այս ալ Բո՛ք տեսարան է:

ՀԻՐ. Ձթողուր, որ Պայրն կարդամ, կ'ուզէ որ շապիկին կոծակը կարեմ, եւ զիրք գրիչ մէկդի թողում . . . Է՛հ, պիտի մեռնիմ թէ որ . . . չբորբոքիմ, չգրեմ, եւ Սաքօ մը, Պօրին մը չըլլիմ . . .

ԿԱՄ. Ծօ՛ տղայ, քեզի ի՞նչ. թող որ քոյրդ վառի, բորբոքի, — — — ըլլի, Բո՛ք ըլլի . . .

ՁԱՔ. Հայրիկ, իրաւունք է, որ շապիկս ուրիշ աղջիկ մը կարէ, եւ ինք նստի ոտանաւորներ կ'լվմայ ու մրտէ. Ամարթին, Պայրն, Հիւսիս եւ ուրիշ չգիտեմ ինչ Բե՛քներ երազէ . . .

ՀԻՐ. Նայէ՛, հայրիկ, ի՛նչ աղոր է սա ոտանաւորս, եւ դու ըսէ՛ մշմաբիտը . . . հանձար մը չե՛մ, աչքերս չե՛ն փայլիր կրակով . . . զլխէս մուկ չե՛նք . . .

ԿԱՄ. Ո՛ւք, այս ալ նոր փորձանք . . .

ՀԻՐ. (Կ'կարգւայ)

« Կլորիկ, կլորիկ, ո՛ւ խնձոր,  
« Իմ երկրիս Երասխի Ձօր.  
« Ինչպէս թարմ ես ու տկար  
« Եւ կուշտ սահես դու մէկ փոր »:

ՁԱՔ. Ի՛նչ անհամ ասուր. ոտք մը պակաս է. աւելցո՛ւր « Եւ ես եմ մէկ յիմար բոր »:

ՀԻՐ. Պակասը դո՛ւն ես, տղէ՛տ: (Մեկուսի) Աարդալ չգիտէ դեռ, եւ իմ վսեմ ոտանաւորս կ'խծրծէ . . .

ԿԱՄ. Իբաւ, դու կարող չես դատել, դեռ ուսմունք չունիս:

ՁԱՔ. Ուրեմն ե՛րբ դասատու պիտի բռնես ինձի համար:

ԿԱՄ. Ծօ՛ դեռ ժամանակ ունիս:

ՁԱՔ. Հայր, պիտեքս կ'բռնին, նայէ՛ . . .

ԿԱՄ. Ա՛աւ, երբ դեսպանատունէն դառնամ այդ բանը կարգի կ'դնեմ

Ռուստովին հետ: Հիմակ գացէք: (Դուրս ելնելու վայր է) Է՛հ, ո՛ւք, ո՛ւք . . . մէյ մը օծիքս ազատի՛ր . . .

ՀԻՐ. Ռուստովս ի՛նչպէս գտար, հայրիկ, աղոր չէ՛, պիտի հրատարակեմ . . .

ԿԱՄ. (Մշա դուրս նայելով) Սքանչելի՛:

ՁԱՔ. (Փէշէն քաշելով) Ռուստովն ե՛րբ պիտի բռնես, հայրիկ:

ԿԱՄ. Ի՛նչ կուտ պիտի վճարես, Ամսա՛ր աղա:

ՄՈՒՇ. Խնձորի կուտ . . .

ԿԱՄ. Է՛հ, է՛հ, թողէ՛ք . . . թողէ՛ք . . . զորձ ունիմ . . . (Ետեւն կ'վազեն և վարադուր կ'իջնէ:)

## ԱՐԱՐ Բ.

## ՏԵՍԻԼ Ա.

ՌՈՒՍՏՈՒՄ՝ արանջէն:

ՌՈՒՍՏՈՒՄ. (Վեր վար քաշելով՝ ճակատը կ'շփէ) . . . Հա՛, աշխարհս սաւորանջ մ'է. քարերն են միամիտները, զոր ճարպիկները ասդիս անդին կը շարժեն՝ նպատակի մը համար . . . : Ես ալ նպատակ ունիմ. այս տան տիրել, եւ տիրանալ միամտի մը, Ամսարին հարստութեանը . . . իր խորհրդականն ու զանձապահը ըլլելէն ձանձրացայ, կ'ուզեմ թէ՛ իր անձին եւ թէ՛ զանձին տէրը ըլլիլ . . . : Անշուշտ վտանգաւոր խաղ է այս . . . բայց պիտի յաջողիմ՝ քանի որ Ամսարի տկար կողմը գիտեմ . . . : Այրենիները բոժոժներ, ուլունք եւ ժժմունք կ'առնեն եւ փոխարէն ոսկի, արծաթ ու մարգարիտ կ'տան. միշտ՝ նոյնպէս կան մարդիկ որ փայլուն խաղալիքներ ձեռք ձգելու համար՝ վրայ կ'տան հանգիստ, պատիւ, հարստութիւն . . . : Պարոն Ամսար առաւ՝ իմ ձեռք՝ այսօր խաղալիկ մը, շքանշան մը՝ որու համար հոգի կ'տար . . . երջանիկ է . . . հիմակ բոլորովին իմ ճանկիս տալն է . . . : Պէ՛տք բռնելով՝ ուզած տեղս պիտի տանիմ զինք . . . յետին ծայր տգէտ այլ փառամոլ՝ իմ խօսքով՝ ձգեց շուկայ, մթերանոց, վարկ, մտաւ մոգական աշխարհ մը, զոր ոմանք քաղաքական կ'անուանեն . . . : Է՛ ինչո՛ւ . . . որպէս զի փայլի, փառաւորուի, ձեռք ձգէ հին հայրենական հող մը, Երասխածորը, ի՛նչ կերպով, մեքենայի մը միջոցաւ . . . : Միամիտ մարդն հաւթածոր, ի՛նչ մեքենան Միղասի շօշափելիքն է, թէ անով իր ժառանգութեան պիտի տիրանայ, գերդաստանին ապագան պիտի յարդարէ, աշխարհիս պատմութեան մէջ անջինջ անուն պիտի թողու . . . : Ուստի ինձի թողուց բոլոր իր

շուկայի եւ տան գործերն, ինք նաւարկելով՝ Լէման լճին մէջ՝ առագաստա-  
լիւր . . . ո՛ր երթալու, Երասխաձոր . . . մտածին աշխարհ մը: Իմ յաղա-  
կագիծս պարզ է . . . խառնակել ամեն բան, ատելութիւն, խռողութիւն ձգել  
տան մէջ, ներսէն առնել բերդն, միշտ վստահութիւն ազդելով, եւ իմ բաղդ  
շինել . . . : Արդէն՝ գրեթէ ամեն լրագիրներն, որ պատրաստ են սկզբունք  
եւ խիղճ ծախել՝ ոսկիի համար, վաստկած եմ: Արբուն եւ Մուշիկ ինձ խ-  
ջակից են: Զարարիկ պէտք է մնայ միշտ տգէտ, Հիւրիկ՝ իմաստակ . . .  
տունը դառնայ Ռաբելոն եւ ես ամենուն տէր եւ իշխան . . . միայն Ռազա-  
րատէն քիչ մը վախճունիմ . . . անգուսպ եւ կասկածոտ կենդանի մ'է: Ժուռ  
աչքով կ'նայի ինձ . . . բայց անոր սիրտն ու բերանն ալ պիտի պրկեմ . . .  
(Դուքս Կ'նայի) Ռայց ինչո՞ւ կ'ուշանայ Լաղմոս, այդ մարդուն պահանջքը պի-  
տի վճարեմ եւ . . . ահա՛ կ'երեւի . . . :

## ՏԵՄԻԼ Բ.

### ՌՈՒՍՏՈՒՄ Է ԿԱԴՄՈՍ:

ԿԱԴ. Ռաբել, Պարոն Ռուստում. խներ ըլլի. զիս ուզեր ես:  
ՌՈՒՍ. Այո՛:  
ԿԱԴ. Ինչո՞ւ համար:  
ՌՈՒՍ. Կուզէի իմանալ թէ կուտերդ առի՞ր Պ. Լամարէն:  
ԿԱԴ. Այո՛, խնձորի կուտ, հով:  
ՌՈՒՍ. Յոյս ունի՞ս առնելու:  
ԿԱԴ. Զգիտեմ:  
ՌՈՒՍ. Մոռցիր այդ գումարը առ այժմ. Լամարս աղան պիտի վճարէ  
քեզ, երբոր Երասխաձոր հասնի . . .  
ԿԱԴ. Սուտուրնէ ի վեր՝ այդ անունը խցուց ականջս. ի՞նչ է. դո՞ւ ալ լէ-  
ման կամ լեմոն պիտի րամես առնելիրիս վրայ:  
ՌՈՒՍ. Լէմանը ոսկեհանք մ'է:  
ԿԱԴ. Իրա՞ն. բայց ես չեմ կրնար սպասել:  
ՌՈՒՍ. Ուրեմն մուրհակդ ինձի դարձո՛ւր:  
ԿԱԴ. Պիտի վճարեն. ո՛հ, Սստուած կեանք տայ. բայց տոկոսն ալ մէկ-  
տեղ:  
ՌՈՒՍ. Զէ՛, եւ ոչ իսկ ամբողջ գումարն. այլ երբորդ մասը՝ որ կ'ընէ 1666  
ոսկի եւ 666 հազարորդ . . .  
ԿԱԴ. Քաջ թուաբան ես, Պարոն Ռուստում, այլ ոչ ուղիղ վճարող. այդ  
կ'դպչի Լամարս աղային պատուոյն, որու պաշտպանն ես, կ'ըսեն:  
ՌՈՒՍ. Ի՞նչ, պարտքն իմն չէ . . . ուրեմն սպասէ . . . յաւիտեան . . .  
Լամարս կրնայ ջնջել մուրհակդ, եթէ դատ բանաս . . .  
ԿԱԴ. Ի՞նչպէս . . .  
ՌՈՒՍ. Այո՛, ազդեցութիւն ունի, քեզ կ'ըզմէ . . .

ԿԱԴ. Հապա՛ ոսկեհանքը:  
ՌՈՒՍ. Այդ կրնայ գտնուիլ, մեր մեռնելէ ետք . . . դու կանխիկը նայէ՛  
. . . եւ Լամարս աղան վճարելու վիճակի մէջ չէ:  
ԿԱԴ. Սրդեօք խելքի՞ն եկած է . . . դրամ շատ ունի . . .  
ՌՈՒՍ. Այդպիսի բան մը. ընդունէ այս պայմանս. միայն հազար եւս կ'ա-  
ւելցնեմ, եթէ ուրիշ մէկ պայմանս ընդունիս:  
ԿԱԴ. Ի՞նչ է:  
ՌՈՒՍ. Դու հաւատարիմ մարդ մը կ'երեւիս. արծաթն աւելի կ'սիրես քան  
թէ սեւ հողը. եկո՛ւր իմ գաղտնի գործակատարս եղիր:  
ԿԱԴ. Ի՞նչ պիտի ընեմ . . .  
ՌՈՒՍ. Ի՞նչ որ ըսեմ . . .  
ԿԱԴ. Այդ ծանր գերութիւն մ'է:  
ՌՈՒՍ. Հազար ոսկին ալ բաւական ծանր է:  
ԿԱԴ. Հապա թէ որ ըսես թէ՛ գնա ինձ քե՛ր . . . քե՛ր . . . ի՞նչ ըսեմ . . .  
ըսածներդ . . . բերեմ պիտի . . . : Այդ ի՞նչ սակարկութիւն է: Սս կապ-  
ուած, դու ազատ. այդ իմ բանիս չգար:  
ՌՈՒՍ. Սրդար մարդն՝ արդար բան կ'պահանջէ . . .  
ԿԱԴ. Սատանան գործ չունի, երբեմն անիրաւ բան ալ պահանջել կ'տայ  
. . . քիչ է տուած գումարդ . . .  
ՌՈՒՍ. Թո՛ղ հազար հինգ հարիւր ըլլի . . .  
ԿԱԴ. Պարոն Ռուստում, խօսքն հով է. ես պայմանը գրաւոր եւ դրամ-  
ները կանխիկ կ'ուզեմ:  
ՌՈՒՍ. Թա՛տ լաւ. ա՛ն սա թուողը, (Կ'գրէ) «Պիտի վճարեմ գրաւորիս  
3166 ոսկի 666 հազարորդ»: Դու ալ գրէ . . . (Վաղմոս Կ'նստի սեղանին առ-  
ջէ) «Պատրաստ եմ կատարել ի՞նչ որ Պ. Ռուստում հրամայէ ինձ . . .» —  
Ստորագրէ՛ . . .  
ԿԱԴ. Զեռքս կ'դողայ. վզէս ոսկի օղակ մը կ'անցրնեմ . . . :  
ՌՈՒՍ. Ստորագրէ՛ . . . երկամէն լաւ է:  
ԿԱԴ. Ա՛ն, (Կ'ստորագրէ) բաղդս կամ մահս կ'նքեցի: Մնաս բարեւ, Պ.  
Ռուստում . . .  
ՌՈՒՍ. Կեցի՛ր, առաջին հրամանս կատարէ՛:  
ԿԱԴ. (Դողալով) Ի՞նչ է:  
ՌՈՒՍ. Ժամէ մ'եկուր գրատուն եւ կլորիկ 3166 ոսկի եւ 666 հազարորդը  
գրպանէ . . . ապա անկողինդ, այս տունը՝ Լամարս աղային տունը՝ փոխա-  
դրէ. գրասեղանի մ'առջեւ նստիր. եւ ի՞նչ որ պատահի, գրէ, օրագրէ . . . :  
մասնաւորապէս Պ. Ռազարատին վրայ ըլլի աչքդ . . . :  
ԿԱԴ. (Մեղուսի) Այս ի՞նչ դիւրին պաշտօն . . . Ուրի՞շ . . .  
ՌՈՒՍ. Ուրիշ բան չկայ առ այժմ . . . գնա՛ . . . (Վաղմոս Կ'մեկնի):

# ՏԵՍԻՆ Գ.

## ՌՈՒՍՏՈՒ Լ ԿԼՄՍԸՐ :

**ԿԼՄ.** Հո՞ւ էր այդ Կաղմոս աղան . ո՞րչափ փոքր կ'երեւի աչքիս . չեմ կրնար տանիլ զինք , թէեւ երբեմն ընկերս էր : Ի՞նչ բան ունէր այս տեղ , Պարոն Ռուստոմ :

**ՌՈՒՍ.** Պործն անուշ տեղը կապեցի :

**ԿԼՄ.** Ստա կ տուիր :

**ՌՈՒՍ.** Մի՞թէ արկղը ստակ կա՞յ . գիտէ՞ր որ մեր բոլոր դրամագլուխը դուրս եկեր կ'պտըտի :

**ԿԼՄ.** Ի՞նչպէս լմնցուցիր :

**ՌՈՒՍ.** Շատ աժան կերպով : Տունդ պիտի նստի , ուտէ խմէ եւ փուլ մը չպիտի պահանջէ : Շղատուն ան ալ կ'ըլլի կ'երթայ :

**ԿԼՄ.** Այդ գէշ է : Բայց թողունք այդ անպիտանն , որ գտածն ուտէ , եւ ուրիշ կարեւոր գործերու վրայ խօսինք :

**ՌՈՒՍ.** Խօսի՛նք :

**ԿԼՄ.** Դու դեսպանատունէն շուտ դարձար , Պ. Ռուստոմ : Մեր բովէս հեռանաս , կարծեմ թէ մէկ կողմս կ'պակսի . ի՞նչ շնորհալի ընդունելութիւն եւ շքանշան :

**ՌՈՒՍ.** Սքանչելի՛ :

**ԿԼՄ.** Բայց մեր միւս խորհուրդն :

**ՌՈՒՍ.** Ո՞րն .

**ԿԼՄ.** Լէման լիճն Յրասխաժոր փոխադրելու խորհուրդը :

**ՌՈՒՍ.** Ամեն բան իր կարգին պիտի գայ :

**ԿԼՄ.** Բայց կ'ուշանայ :

**ՌՈՒՍ.** Բայց շքանշանն անոր յատաճարանն է : Պէտք է որ հին ժառանգութեանդ եւ ազնուականութեանդ թղթերն հանես . եթէ չունիս , կ'շինուին . . .

**ԿԼՄ.** Ի՞նչպէս :

**ՌՈՒՍ.** Բաղարականութեամբ :

**ԿԼՄ.** Հապա մերենան պիտի պատրաստէ կ'ըսէիր . . .

**ՌՈՒՍ.** Զարմանալի մարդ ես . կամաւ անմիտ կ'մեռնաս . . . մի՞թէ քաղաքականութիւնն ալ մերենայ մը չէ՞ , բիւրական գործի մը չէ՞ , որ զանազան տարատեսիւներ կ'լուծէ , կ'բաղադրէ , կ'պարզէ . . .

**ԿԼՄ.** Խնդրեմ , աւելի պարզ խօսէ՛ . . .

**ՌՈՒՍ.** . . . Ապա կ'գտէ , կ'բամէ , կ'արտահանէ , կ'ներմուծէ . . .

**ԿԼՄ.** Այդպէս , հիմակ կ'հասկնամ :

**ՌՈՒՍ.** (ձեզուսի) Ի՞րա՞ւ որ սրամիտ մարդ է . . . (առ Կամար) Այնպէս որ յանկարծ նիւթին յատկանիշն երեւան կ'ենէ . . . մին կ'հալի , միւսը կը ցնդի . . . եւ . . .

**ԿԼՄ.** Հիմակ աւելի լաւ կ'հասկնամ . . .

**ՌՈՒՍ.** . . . Եւ բնութեան այս ընդհանուր այլափոխութեան ժամանակ , բոլոր հաստատուն մարմիններն կ'լուծուին , հեղուկները կ'ծաւալին , հոսանուտները կ'շոգիանան , եւ զէ՛ն Զէ՛ն կ'ենես կ'տեսնես որ ջուրը ցամար , լեռը դաշտ եղեր է , Լէման լիճը Յրասխաժոր փոխադրուեր , եւ Կամարականներն անհետ լինելէն ետեւ՝ վերստին դարձեր , Յրաշարունեաց երկրին տիրացեր են . . . :

**ԿԼՄ.** (ձեզուսի) Ի՞նչ պայծառ կ'խօսի Պ. Ռուստոմ . . . (առ Ռուստոմ) Միայն սեւ կէտ մը կ'տեսնեմ հորիզոնին վրայ :

**ՌՈՒՍ.** Ո՞րն է նայիմ :

**ԿԼՄ.** Օրէ՛ն Գեւ խօսքը :

**ՌՈՒՍ.** Կամա՛ր աղա , պա՛հ , կատա՛ղ կ'ընես : Օրին մէկը՝ խօսքի ձեւ է , որ կ'նշանակէ , այսօր , վաղը , ամսէ մը . . .

**ԿԼՄ.** Նոյնպէս՝ դատաստանին օրը :

**ՌՈՒՍ.** (ձեզուսի) Մերեցածին չափ դողմզուիս չէ մեր Կամարը :

**ԿԼՄ.** Ի՞նչո՞ւ , Պարոն Ռուստոմ , երեսդ կ'դարձնես անդին :

**ՌՈՒՍ.** Որ նայիմ թէ մեզմէ աղէկներն ի՞նչ կ'ըսեն :

**ԿԼՄ.** Փէրիններու կ'հատան :

**ՌՈՒՍ.** Հապա կ'ուզես , որ մարգարէ ըլլիմ եւ զէ՛ն Գեւ գուշակեմ :

**ԿԼՄ.** Գիտես , բարեկամ , որ բնութեամբ կասկածոտ եւ անհամբեր եմ . երբոր ճամբայ ելնեմ , կ'ուզեմ որ ճամբաս գիտնամ եւ շիտակ նպատակիս հասնիմ :

**ՌՈՒՍ.** Ի՞նչ շիտակ մարդ ես , Կամա՛ր աղա . կ'երեւի թէ իմ վրայ կը կասկածիս : Եւ սակայն կրամ շքանշանդ , վայելած համարումդ , լրագիրներէ ընդունած գովեստներդ , մեծ համբաւդ աշխարհիս վրայ , բաւական ապացոյցներ են որ ես բու շահերուդ աւելի հոգ կ'տանիմ քան թէ իմիններուս : Զե՛ն կարող քիչ մ'ես համբերել , որ տեսնես մեծ օրը : Լա՛ւ , եթէ զոհ չես , ահա ես կ'բաշուիմ , կ'հրաժարիմ պաշտօնէս :

**ԿԼՄ.** Զէ՛ , այդ չեմ ըսեր , բարեկամ . ես քեզմէ երկրէն երկինք զոհ եմ , միշտակ այս տեղ գործերս քիչ մը ծուռ կ'երթան . քիչ մը կարգ կանոն դնեմք տան մէջ , մինչեւ որ Յրասխաժորը բռնենք :

**ՌՈՒՍ.** Է՛ ի՞նչ կայ անկանոն տան մէջ :

**ԿԼՄ.** Ի՞նչ գիտնամ . կ'ըսեն թէ ամեն բան վեր ի վայր է . գաւկններս իրարու միւս կ'ուտեն . Հիլիկ ոտանաւորներ կ'շինէ . Զարարիկ՝ խաղալիկներով օրերը կ'անցընէ , կինս դրացիներուն միւսը կ'ծամէ եւ տունը նստած չուծի , սպասաւորներս անգամ մէյմէկ պատուհասներ դարձեր են , ո՛չ չէնքով շնորհրով կերակուր կ'եփի , ո՛չ աղտոտ լաթերը կ'լուացուին , ո՛չ տունը կը մաքրուի : Պործներս ալ խառնաշփոթ վիճակի մէջ են . Կաղմոս աղան խաղճ խայտառակ ըրաւ զիս քիչ մ'առաջ՝ չնչին գումարի մը համար , եւ պարտատէրերս շարունակ դուռս կ'զարնեն : . . . տունս կ'ծաւալեն . . . :

**ՌՈՒՍ.** Է՛հ , Կամար աղա , այդպէս կ'ամբաստանես մատակարարու-

թիւնս. ես ալ բան գործ չունիմ հոս, շուտով կ'հրաժարիմ . . . զիտեմ սա-  
կայն թէ՛ ո՞չ կ'թափէ այդ թոյնը սրտիդ մէջ . . .

**ԿԼՄ.** Է՛հ, հրաժարականի խօսք մի՛ ըներ. միթէ խորհրդականս չե՛ս,  
անհուն է վստահութիւնս վրադ. միայն՝ մինչեւ օրէ՛ն Գէշ գալը՝ բան մ'ընենք:

**ՌՈՒՍ.** Աւելի ճարպիկ խորհրդական մը գտի՛ր . . . Ի՛նչ են այդ տնական  
մասնաւոր գործերն՝ աւելի բարձր, վսեմ ձեռնարկի մը մօտ: Երբոր այս յա-  
ջողի, միաներն ինքնին կ'կարգադրին, Պարա՛ւ բան. միշտ հին, ստորիմ  
ճամբան քալել կ'սիրեն անոնք՝ որ միշտ վար կ'նային . . . չէ՛, չէ՛, կ'սխա-  
ւէր դեսպանը, երբ այսօր կ'ըսէր . . .

**ԿԼՄ.** Ի՛նչ կ'ըսէր . . .

**ՌՈՒՍ.** Թէ բարձր մարդ ես, թէ մասնաւոր շահեր ընդհանուրին կ'գոհես.

**ԿԼՄ.** Իրա՛ն, աշխպէս ըսաւ. ես չլսեցի . . . ո՛հ, թող զիտնայ վսեմա-  
փայլ դեսպանը որ չէ թէ միայն անձնական շահ, այլ բոլոր կեանքս զիտեմ  
գոհել՝ լաւ, արդար դատի մը համար . . . Ի՛նչ կարծես դու, Պարոն Ռուս-  
տոմ . . . :

**ՌՈՒՍ.** Կարծեցի թէ կէս ճամբան պիտի կենաս . . . :

**ԿԼՄ.** Տնո՛րք . . . :

**ՌՈՒՍ.** Ահա հիմակ նորէն մարդ եղար, եւ գիտցած եղիր որ, եթէ նորէն  
թողնաս, պիտի մեկնիմ . . . :

**ԿԼՄ.** Իրա՛ն, այդպէս ըսա՛ւ վսեմափայլն. ո՛հ, Ի՛նչ գերազնիւ մարդ:  
Հրատարակել տո՛ւր այդ . . .

**ՌՈՒՍ.** Հապա՛, հապա՛, վաղը պիտի կարդաս խոշոր տառերով գրուած՝  
թէ մեծ, մեծ մարդ ես . . .

**ԿԼՄ.** Լռութի՛ւն. մարդ կ'գայ. մեր գաղտնիքը դուրս չենէ:

## ՏԵՍԻԼ Գ.

### ԱՌԱՋԻՆԷ Լ ԱՐԲՈՒՆ:

**ԱՐԲ.** Տէ՛ր իմ, շատ խելօք եւ գիտուն մարդիկ՝ առաւօտէն ի վեր՝ վարձ  
ինչ որ գտան կերան, եւ դեռ ձեր հրամանին կ'սպասեն որ ներկայանան:

**ՌՈՒՍ.** Սա կ'երթամ, գործ ունիմ կարելոր, դու ընդունէ, Կամսա՛ր աղա:  
Միայն կարճ կապէ, երես տալիք մարդ չեն այդ գիտուններն . . . մանա-  
ւանդ ամեն բան մի՛ ըսեր, թոյլբերան են: (Կ'ԲԷԿԷ)

**ԿԼՄ:** Մերքո՛ւն, գնա հրամցո՛ւր այդ պարոններն. նայինք Ի՛նչ ունին ըսե-  
լու: (Արբուն դուրս կ'ենէ:)

## ՏԵՍԻԼ Ե.

### ԿԱՄՍԱՐ:

**ԿԼՄ.** Պահ մը Բագարատ որդիս միտքս պղտորեց . . . Ռուստոմ աշ-  
խարհիս ամենէ՛ւ անկեղծ մարդն է . . . ալ տարակոյս չունիմ . . . եթէ հե-  
ռանայ՝ ապագաս գէշ է, պէտք է որ ցմահ բովս պահեմ, իբրեւ իմ լուսատու  
փարոսս . . . Ահա՛ եկան . . .

## ՏԵՍԻԼ Զ.

### ԿԱՄՍԱՐ, ԱՐԲՈՒՆ, ՀՈՎՆԱԿ, ՍԵՒՈՒՆԻ Լ ԳԻՍԵԱԿ:

**ԱՐԲ.** (Հեւերուն) Հրամեցէ՛ք, պարոններ, հրաճեցէ՛ք . . .

**ՍԵՒ.** (Մինչև գետին ճակելով) Վսեմափայլ տէր . . . (ճակաւը կ'չփէ և  
աթոռի մը վրայ կ'ենէ) այսօր հանդիսաւոր օր մ'է մեզի համար . . .

**ԱՐԲ.** (Մեկուսի) Վասն զի փորերնին լեցուցին վարը . . .

**ՍԵՒ.** (Հարունակելով) Վա՛յ իմ ընկերներուս կողմէ ողջունել եւ շնորհա-  
ւորել ձեզ այն շրեղ շքանշանին եւ վերնատուր շնորհին համար, որու այնքան  
մեծ իրաւունք ստացած էք ձեր անբաւ ծառայութեան ց եւ անսահման ար-  
ժանեաց համար: (Հողմակէն դառնալով) Ի՛նչպէս է . . . (առ Վամսար) Քրա-  
ւունք, այո՛, իրաւունք, որ ընդգրկելով պարտքը, իբրեւ աստղ առաւօտեան՝  
աղամանդի պէս՝ կ'փայլի ձեր վեհ ճակտին վրայ. ճակա՛տ անբիծ, ճակա՛տ  
բեղմնաւոր, ուր կ'ընակին արդարութիւն եւ ճշմարտութիւն . . . (չորս գէշ  
նայելով գլուխ կը բռնէ:)

**ՀՈՎ.** (առ Սեւունի կամացուկ) Աւելի՛ ազդու:

**ԱՐԲ.** (Մեկուսի) Թշուառականը զոց սորված է եւ մեզի կ'ծախէ. Ի՛նչ կա-  
տակերգութիւն է այս:

**ՍԵՒ.** Արդարութիւն եւ ճշմարտութիւն, երկու հմայական բառեր, որոց  
զ ո՞հ տալով ձեր հոգին ու կեանքն, անմահն տէր, կենդանութիւն տուիք մեզի:  
**ԱՐԲ.** (Մեկուսի) Ըսել կ'ուզէ որ զինով են . . .

**ՍԵՒ.** Տո՛ւի՛ր . . . դո՛ւք անգուգական մարդ . . . հեշտակ . . . քերով-  
բէ . . . սերովբէ . . . դո՛ւք . . .

**ԿԼՄ.** (Գլուխ բռնելով) Ռ՛հ, ո՛հ, շատ ազնիւ էք . . . ո՛հ, շնորհակալ եմ  
ես իմ պարտքս կը կատարեմ, իմ կեանքս ազգիս նուիրած եմ . . .

**ՀՈՎ.** Անգիւն նուէր . . .

**ՍԵՒ.** (առ Հողմակ) Եւեցի՛ր, դեռ չլմնցուցի. պարբերութիւն մ'ալ կայ . . .

**ՀՈՎ.** Է՛հ, շուտ ըրէ, ես ալ պիտի ատենախօսեմ . . .

ՍԵՒ. Մեր պայմանն ի՞նչ էր . . .

ՀՈՎ. (Սեռենին վար կ'ենտէ աթուէն և ինք կ'ենէ) Նուէ՛ր նուիրական , որով պիտի նուիրուինք բեզ ամեն հոգի, ամեն սիրտ, ամեն բերան, ամեն շուրթ, ամեն աչք, եւ պիտի օրհնեն փողերով եւ սրինգներով այն անզուգական բարերարն՝ որ Հայոց անունը համբաւոյն կ'ոնակը հեծցուց, որ անկերպարան Հայութեան դէմը շնորհեց եւ . . . եւ . . . եւ (առ Սեռենին) թելը կորսնցուցի խօսքիս . . . դու շարունակէ, կ'աղաչեմ . . .

ԳԻՍ. Է՛հ, մի՛ զարմանաք, ո՛ր տէր, յուզմունք եւ երախտագիտութիւն կը շփոթեն մեր լեզուն, մեր գաղափարներն, եւ . . .

ԱՐԲ. (Մեկուսի) Զբսեր գինին, անպիտանը . . .

ԿԱՄ. Եւ ես ձեզի շնորհապարտ եմ, որ այդպէս կ'լուսատրէք հասարակաց կարծիքն իր շահերուն վրայ եւ . . .

ՍԵՒ. Ի՞նչ սքանչելի ատենարանութիւն . . .

ՀՈՎ. Օրհնածիր բերանն համբուրելս կ'գայ :

ԳԻՍ. (Մեկուսի) Նայինք ծայրը բան մը կայ . . .

ԱՐԲ. (Մեկուսի) Կարծեմ թէ՛ բոլոր այս ճարճատմուրքը մէկ բանի զրուշի համար է :

ՍԵՒ. Օրագրիս մէջ գրելու համար հրաման մ'ունի՛րք, տէր իմ :

ԿԱՄ. Զէ՛, շնորհակալ եմ. մի՛ շատ գրէք իմ վրայ, ես գովեստ չեմ սիրեր . . .

ՀՈՎ. (Մեկուսի) Խուլականջ կ'ըլլի . . .

ԳԻՍ. (Մեկուսի) Կարծեմ բան մը չպիտի բրնձի . . .

ՍԵՒ. Գոնէ մեզի մի բանի տեղեկութիւններ տուէք ձեր վսեմ փռնարկին վրայ . . .

ԿԱՄ. Գաղտնիք մ'է. բայց ձեզի կ'այտնեմ. մերենային կ'սպասեմ, որ մօտ օրերս գալով զիւրին պիտի լինի Լէման լիճը Երասխածոր փոխադրել : Զէք կրնար երեւակայել թէ ո՛րքան կ'տանջուիմ, զիշեր ցորեկ կ'տընիմ, լեզու, ստակ, հնարք չեմ խնայեր որ խորհուրդս ի գործ դնեմ . . .

ՀՈՎ. Կեցցէ՛ Կամսար աղան . . .

ԳԻՍ. Սպրի՛ մեծ մարդը . . .

ՍԵՒ. Ի՞նչ առատ նիւթ գրելու . . . միայն բան մը կ'պակսի . . .

ԿԱՄ. Ի՞նչ :

ՍԵՒ. Թուղթ ու թելան . . .

ԱՐԲ. (Մեկուսի) Այսչալ կարծէ թէ մելան երբ ունենայ, խելք ալ կ'ունենայ. մրսի՛ գլխուն . . . մելանին շտակն եւ ոսկի կ'տեսնեմ . . .

ՀՈՎ. Ի՞նչ հրաշալի գործիք :

ԿԱՄ. Շա՛տ, շա՛տ. իմ գիւտս է. եթէ Պ. Ռուստում հոս ըլլէր, աւելի մանր պիտի նկարագրէր ձեզի այս մերենան :

ՍԵՒ. Փոյթ չէ. մէկ բանի խօսքով կ'հասկնանք. այնքան անմիտ չենք :

ԿԱՄ. Լա՛ւ. մերենան հովէն կ'շարժի, այնքան արագ՝ որ կարծես թէ անշարժ է. կրակի եւ ածուխի պէտք չունի, վասն զի իմ հոգւոյս հուրն ու շունչը

կ'բանին. կրկնակ անիւներ ունի որ իրարու հակառակ կ'շարժին եւ սատիկ կ'սուլեն, այնպէս որ տաս մղոն հեռուէն կ'լսուի . . . կարծեմ հասկցաք . . .

ՀՈՎ. Ի՞նչ ըսել է :

ԳԻՍ. (Մեկուսի) Կորողին երթամ, եթէ բան մը հասկցայ . . . (առ Կամսար) Տէ՛ր իմ, շատ խորհրդաբան էք : Ես ուրիշ տեսակիտով կը դատեմ խնդիրը :

ԿԱՄ. Ի՞նչ խնդիր . . .

ԳԻՍ. Հո՛վնակ, փոխաբերական իմաստ ունի այդ մերենան . . .

ՀՈՎ. Ես բնաւ համամիտ չքմ քեզի . . .

ՍԵՒ. Շատ կ'սխալիս, Պ. Գիսակ, Կամսար աղան ո՛չ մանկավարժ է քեզի պէս, եւ ոչ բանաստեղծ՝ Հովնակին պէս . . . այս դրական մարդ է, Լիդրէի աշակերտն է . . . իր մերենան ինքնածին շարժում չունի, արտաքին ու վանիչ զօրութեամբ կ'զլորի . . .

ՀՈՎ. Զեմ ընդունիր այդ շեղարակացութիւնդ. ես կարող եմ համոզել քեզ՝ որ մերենան զրիչ՝ եւ չզրիչ՝ մերենայ է, այնպէս որ՝ ինքնամուղ եւ ինքնաշարժ՝ մերթ խաւարի՝ եւ մերթ լոյսի մէջ կ'իծալի . . . հակընդդէմ զաղափարներու անհուն հակակշռութեան մէջ . . .

ԿԱՄ. Արբո՛ւն, ասոնք ի՞նչ կ'խօսին :

ԱՐԲ. Զինական լեզուով՝ կ'բացատրեն մերենադ, տէր իմ :

ԿԱՄ. Իրա՛ւ, զարմանք, չգիտէի որ մինչեւ Զինաստան լսուած է զիւտս :

ԳԻՍ. Թող Կամսար աղան վճռէ՛ մեր դատը : Ես կ'պնդեմ որ մերենան դրամ է. ձկան պէս կ'սահի կ'զլորի մարդուս ձեռքէն եւ ծովը կ'իծափի . . .

ՍԵՒ. Շատ ապուշ ես, բարեկամ : Զուներդ ձեռքէն ի՞նչ կ'իծափի . . .

ԳԻՍ. Լեզուդ՝ քեզի քաջէ՛, քանքան . . .

ՍԵՒ. Զէ՛, չէ՛, սխալ է. ո՛րքան ծուռ կ'տրամաբանէք. Կամսար աղան կ'ակնարկէ հոգեշունչ, թեւաւոր մերենայ մը. եւ ի՞նչ կրնայ ըլլիլ այն, եթէ ոչ այն հրեշտակն որ թեւերն իր տան վրայ տարածած է . . .

ՀՈՎ. Ի՞նչ ըսիր, անկոթ մարգարէ : Առջի խօսքը վերջինին հետ կ'յարմարի. մէկ վայրկեանի մէջ երեք անգամ կարծիք փոխեցիր . . .

ՍԵՒ. Վասն՞ զի ես շարժում կ'սիրեմ, շարժում, որ յառաջդիմութիւնը սել է, եւ ձեզի պէս խլուրդներ չեմ . . .

ԱՐԲ. (Մեկուսի) Շայեցէք, ի՞նչ անբաղաճալար են մեր ուսումնականները : Է՛՛ ասոնք Ազգին ջահերը պիտի ըլլին . . .

ԿԱՄ. Է՛յ, լուռի՛ն . . .

ՍԵՒ. Մեր դատը կտրէ՛, դո՛ւ կտրէ՛ մեր դատը, Կամսար աղա. խօսէ՛ ո՛վ իրաւունք ունի . . .

ԿԱՄ. Գիսակ :

ԳԻՍ. Այսինքն դրամն. ուրեմն. ուրեմն անկոթը դու ես, եւ իմ կարծիքս ճիշդ է, թէ եւ զրպանս պարապ . . .

ԿԱՄ. Արբո՛ւն, այս մարդերուն մէջ մէկ հինգնոց տուր, թո՛ղ Ազգին համար աշխատին . . . (Աբբուն ամեն մեկուն հնգական զրուշ կ'աւայ :

ՍԵՒ. Աստուած կեանք տայ, Կամսար աղա . . .

**ՀԱՎ.** (Մեկուսի) Վերջապէս մերենան մեզ բերաւ մեր ուզած տեղը:

**ՍԵՒ.** Ուրիշ տալիք . . . հրաման ունի՞ք, Լամար աղա. հոգ մի՛ ընէք, մեր կեանքը կ'մնջի, մեր աչքին լոյսը կ'թափի Ս.գգին համար . . .

**ԿԼԱՄ.** Լեցի՛ք, յարմար առիթ մ'է՛ծեզի խորհուրդ մը հարցնելու . . . ահա կ'գայ մեր չարամէճին, Զաքարիկ:

## ՏԵՍԻԼ՝Ի.

ՍՈՒՍԶԻՆՔ Լ ԶԱՔԱՐԻԿ:

**ԶԱՔ.** Հայրիկ, մաման հիւանդ պառկած է եւ Հիրիկին աչքերը շատ կարդալէն կ'ցալին. բժիշկ կ'ուզեն:

**ԿԼԱՄ.** Հիմակ թո՛ղ այդ. ինչու քիչ մը չեն համբերեր. երբ Յրասխածոր երթանք՝ կ'բժշկուին . . . Ս.՝ ատենն է, որ դոռն քիչ մը կրթուիս մարդ ըլլիս . . .

**ԶԱՔ.** Ես ալ պիտի չգամ՝ ձեր հետը, Յրասխածոր. հոն շուտ մը կ'կըրթուիմ . . .

**ԿԼԱՄ.** Ս.ն այժմ՝ քիչ մը բան սորվիլ պէտք է, ո՛րդեակ: Ս.հա հոս ներկայ են Ս.գգին ամենէ անուանի գիտուններն. մին Հայոց Հիւլօն է, միւսը Պօրլն է, այս ալ Քրէօպէլն է . . . Հիմակ ըսէք, պա՛րոններ, ի՞նչ ուզում յարմար կ'տեսնէք տղուս համար: Նստեցէք . . . (Կ'նստին)

**ՍԵՒ.** (ոռք կ'ընէ) Պա՛րոններ, կենսական է այս խնդիրը, զոր կ'առաջարկէ մեզ Լամար աղան. իր գերդաստանին շառաւիղը դատարարակել այնպէս որ հօրն արժանի զաւակ եւ ազգութեան մոմն ու ճրագն ըլլի: Ես փորձով գիտեմ, որ լրագրութիւնն ուսումնապետ Զաքարիկ պէյլին յարմարագոյն ուսանելի գիտութիւնն է: Հշմարտութիւնը բարոյզել, առանց դրամի, լոյս, միտման, սէր սիրել. ի՞նչ վսեմ պաշտօն . . . Ուստի կ'առաջարկեմ որ լրագրապետ ըլլի եւ մամուլ մը գնելով իմ բովս աշակերտէ . . .

**ԱՐԲ.** (Մեկուսի) Որ անօթութենէ բերանն հոտի եւ սուտեր ծախելով՝ մուրացկանութեամբ ապրի . . .

**ՀԱՎ.** Ս.րդարեւ ծանրակշիռ խնդիր. մարդ շինել, կոշտ ժայռէ մ'արժան շինել, եւ անոր հոգի մը փչել, Լամարականաց փառաց պսակ մը յերկրել . . . երվին երվին գոյներով . . . ո՛հ, սքանչելի՛ գործ . . . անթաւամ պսակ:

**ԶԱՔ.** Հայրիկ, ի՞նչ կ'ըսեն . . . դեռ փոքր եմ, կ'ուզեն պսակ դնել զըլուխս . . .

**ԱՐԲ.** Մտիկ ըրէ, Զաքարիկ, ասոնք մեր գլխէն վեր բաներ են: Նայինք ի՞նչ տեսակ կապիկ պիտի ընեն քեզ . . .

**ՀԱՎ.** (որ նոյն պահուն շարունակ երկինք կ'նայի որ ներշնչուի) Ուստի՛ կ'առաջարկեմ որ Զաքարիկ, որ հա՛ր հեր ունէ՛ւ ալիսն էն ալիսն էն, Պեղատան հեծնայ եւ Ողիմպոս ելնէ . . .

**ԶԱՔ.** Ս.ղտ'ր բան, այս ալ կ'ուզէ որ ալիսն բռնեմ, թէ եւ հրացան բըռնել չգիտեմ:

**ԳԻՍ.** Պա՛րոններ, հովի խօսքեր են այդ ամենն. ես իբրեւ Քրէօպէլի աշակերտ՝ դարտակ բառեր չեմ սիրեր. միթէ՞ ձեզի՞ ընկեր է խօսիլ երկնային արուեստի մը, մանկավարժական գիտութեան եւ կրթութեան վրայ, դուք որ տակաւին անոր այբ ու բէնը չգիտէք:

**ԶԱՔ.** Ես այբ ու բէնը սորված եմ, պարոն:

**ԳԻՍ.** Ս.հաւաստիկ իմ համոզումս. պէտք է նախ քննել այդ մանկան հոգեբանական հանգամանքը, կշռել մարմինը, չափել գլխուն գանկը, զննել դիտակով ուղեղը, անոր ցեղական եւ ընտանեկան յարակցութիւնները նշանակել, զրի առնել անոր ժառանգական կամ եկամուտ յօժարութիւնները, հօրն ու մօրը ձենն ու կտրուածքը զննել, նոյնպէս պէտք է աչքէ անցընել աշխարհիս ամեն կրթական ծրագիրներն, եւ վերջը նստիլ նոր ծրագիր մը շինել, եւ անոր վրայ քայլել . . .

**ԿԼԱՄ.** Ի՛նչ. հիմակ պէտք է որ տղաս, զիս, կինս չափես չափչփես . . . այդ ի՞նչ երկար եւ վտանգաւոր գործ . . .

**ԱՐԲ.** Շուագատկին կ'ըմենայ եւ գործադրութիւնը թողնեցուք կ'մնայ, Լամար աղա . . .

**ԳԻՍ.** Խօշիկէն վեր մ'ելլար . . . բայց ծրագիրս յատենական գործ կ'ըլլի, եւ աշխարհիս ամեն Զաքարիկներուն կ'ծառայէ:

**ԱՐԲ.** (Մեկուսի) Ի՛նչ ամբարտաւան մարդ . . .

**ՍԵՒ.** Քեզի բան մ'ըսե՛մ, այդ ծրագիրդ է՛քօք մ'է . . .

**ԿԼԱՄ.** (Մեկուսի) Վախճամ տղիս Բօ՛ խաղալ պիտի սորվեցնեն . . .

**ՍԵՒ.** Հա՛, հա՛, Լամար աղա. մինչեւ որ ծրագիրը շինուի՝ թո՛ղ տղադ Բօ՛ խաղայ. մինչեւ այն ատեն մօրուքն ալ կ'բուռնի, եւ մօրուքին թելերը սանտրելու եւ համբելու կերպին վրայ ալ Պ. Պիսակ նոր ծրագիր մը պիտի շինէ . . .

**ՀԱՎ.** Իմ կարծեօք՝ ծրագրին գործնական կողմը Պ. Պիսակին գրպանելիք գումարն է . . .

**ԳԻՍ.** Կ'բողորբեմ քեզի դէմ եւ կ'հաստատեմ տրամաբանօրէն որ աւանակ մ'ես:

**ՀԱՎ.** Ես ալ կ'անդամ՝ որ նախ խելքիդ վիճակին վրայ ծրագիր մը շինես եւ առաջ լեզուդ կրթես:

**ԳԻՍ.** Կ'բողորբեմ . . . կ'համարահեմ ձեր ամենուն կարծիքն . . . իմ գըլուխս տեղն է . . .

**ՀԱՎ.** Միայն մէջի ըղեղը շարժեր է . . .

**ԿԼԱՄ.** (Մեկուսի) Ս.տոնք նորէն կուռի պիտի բռնուին. ի՛նչ տեսակ կենդանիներ են, Տէր Ս.ստուած. չեն կրնար երկու խօսք ըսել առանց բֆրելու:

**ԳԻՍ.** Ձեր ամենուն խելքին պտուկն եմ չափեր, անբան մարգարէներ . . .

**ՀԱՎ.** Խորի՛ր, գիտուններուն թափմիտը . . . փախուկը . . .

**ԿԼԱՄ.** Է՛յ, նորէն համը հոտը փախուցիր . . . կամ կտրուկ ճամբայ մը գտէք տղուս կրթութեան համար, կամ կորսուեցէք զացէք . . .

**ԳԻՍ.** Կ'բողորբեմ . . . դու իրաւունք չունիս զիս վնասելու: Զաքարիկ՝ ըստ օրինի՛ իմն է, իմ նիւթս է, զոր պէտք է ձեւեմ . . .

ԿԱՄ. (մեկուսի) Թրաւցնէ փախուկ է այս մարդը. զաւկիս ալ տէրը կ'ուզէ ըլլի . . . (առ Գիսակ) Յս Լու եկայ ձեր տալիք կրթութենէ . . .

ԳԻՍ. Պիտուութիւնը քեզ կ'դատապարտէ . . . . պատասխանատուութիւնդ մեծ է . . .

ԿԱՄ. Աղբար, չեմ ուզեր . . . Թո՛ղ տղաս տգէտ մնայ . . .

ԳԻՍ. Անկարելի՛ բան . . .

ՀՈՎ. Յիմար է . . . »

ԿԱՄ. (մեկուսի) Ի՞նչ ընեմ տղաս . . .

ՍԵՒ. Յիմարանոցը զրկելու է . . . : (Նշոյն միջոցին դուրսը աղմուկ և ողբէ ձայներ :)

ԱՐԲ. Ի՞նչ աղաղակներ են . . .

## ՏԵՍԻՒ Ը.

ԱՌԱՋԻՆԲ և ՄՈՒՇԻԿ :

ՄՈՒՇ. (Հեաւուլ ներս կ'մտնէ) Ա՛խ, ա՛խ, ա՛խ, տէ՛ր իմ Լամար, Տի-կինը հոգեվարք է . . . հասէ՛ք . . . բժի՛շկ . . . ձե՛զ տեսնել կ'ուզէ . . . . շո՛ւտ . . .

ԿԱՄ. Վա՛յ գլխուս . . . երթանք . . . . (Ամբոջը վա՛խ, վա՛խ, պոռաւով դուրս կ'ելնեն և վարադուրը կ'դողուէ) :

## ԱՐԱՐ Դ.

## ՏԵՍԻՒ Ա.

ԲԱԳԱՐԱՍ արանքի՛ն :

ԲԱԳ. Միրական, խեղճ մայր . . . սեւ հողն է . . . Է ի՞նչպէս այն քաջ-առողջ, կայտառ կի՛նը մէկ երկու շաբաթուան մէջ հալեցաւ . . . եւ վերջապէս գերեզման իջաւ . . . Ա՛հ, բնական չէր այդ մահը . . . ահռելի՛ կասկած մը . . . այո՛, բայց ի՞նչ ընեմ, որո՞ւ բացուիմ : Զորս կողմը բռնած են խենդերը, նենգաւորներն ու հացկատակները : Ասոնք բաական չէին, հիմակ ունինք նոր հիւր մ'ալ, որ կ'ընակի հոս, որպէս թէ պապին տունը ըլլէր . . . Ելդ Կաղմոս անուն մարդը Ռուստոմին լրտեսն է, որ տան մէջ անցած դար-

ձածը կ'ղիտէ եւ անոր կ'հաղորդէ . . . Ի՞նչ չարագոյժ դէմք . . . միթէ այն, այն չէ . . . բայց միթէ կարելի՛ է այնքան չարասրտութիւն . . . Ափսո՛ս, ձայնս կարճ է, երբ Ռուստոմ ինքնիշխան կ'տիրէ ամենուն վրայ . . . հայրս անոր արծազանքն է . . . ողորմելին կարծէ թէ անոր ձեռք Լամարականաց գերդաստանը պիտի վերականգնէ, մինչդեռ իրօք իր հորը կ'փորէ անգէտս : Ի՞նչ կուրուծին, սեւ, սեւ է մեր բաղդը : Հայրս իր պատիժը պիտի կրէ, այլ ուշ պիտի սժափի : Արդէն առաջին զոհը, մայրս՝ գնաց : Պէտք է, պէտք է յետին ձիգ մը, փորձ մ'ընել եւ ցոյց տալ հօրս այն վիհն որու եզրը կեցած է . . . Քայց ի՞նչպէս . . . նա չհամոզուիր, հաստատուն ապացոյցներ կ'ուզէ : Թերեւս Արբունին ձեռք գտնեմ այդ փաստերը. նա զաղտնի ինծի հետ է. պիտի օգնէ ինձ : Ահա կ'երեւի :

## ՏԵՍԻՒ Բ.

ԲԱԳԱՐԱՍ և ԱՐԲՈՒՆ :

ԲԱԳ. Ի՞նչ լուր :  
ԱՐԲ. Աղէտալի՛ . . . կասկածդ կ'հաստատուի . . . . : Անօրէն մարդը՝ վատասիրտ Կողմաս բժշկին ձեռք . . .

ԲԱԳ. Խօսէ՛, ի՞նչ . . .

ԱՐԲ. Մայրդ թունաւորած է :

ԲԱԳ. Սոսկալի՛ ոճիր . . . Ի՞նչպէս իմացար :

ԱՐԲ. Կաղմոսին բերնէն առի :

ԲԱԳ. Պատճառ :

ԱՐԲ. Յայտնի է . . . այս վերջին ժամանակներս՝ մօրդ անտունելի դարձած էր Ռուստոմ, որու դաւերը կ'հասկնար եւ հօրդ կ'զանգատէր : Ռուստոմ տեսաւ արգելքն եւ զայն պարզապէս մէջ տեղէն վերցուց, թոյնի միջոցաւ . . . : Աչքդ չո՛րս բաց, Քազարա՛տ, կարգը քուկդ է :

ԲԱԳ. Հապա Կողմաս ո՛ր է :

ԱՐԲ. Ռուստոմի հրամանաւ քաղրէն . . . ելած է :

ԲԱԳ. (կատաղօրէն) Պիտի սպաննեմ ես այդ զազանը : Հայրս եւ ոչ բժիշկ մը զրկեց մօրս, անշուշտ Ռուստոմին զրդմամբ :

ԱՐԲ. Վտանգաւոր միջոց . . . եւ կամաց խօսէ՛ . . . այս տեղ պատերն անգամ ականջ ունին . . . եւ զլուխդ լաւ պահպանէ :

ԲԱԳ. Մուշիկ ո՞ր կողմն է :

ԱՐԲ. Մեր կողմը :

ԲԱԳ. Հապա Հիրի՛կ :

ԱՐԲ. Վաղը կ'կարգուի՝ Ռուստոմի հրամանաւ՝ Թեթեւօլիկ օտարի մը հետ, որ իր արբանեակն է :

ԲԱԳ. Հապա Զաքարի՛կ :

**ԱՐԲ.** Այն ալ չգիտեմ որ համախարանը պիտի դրկուի, ուր անշուշտ չուտով պիտի մոռնայ ընտանիք, հայրենիք եւ Ռուստովի գործիքը պիտի դառնայ:

**ԲԱԳ.** Ուրեմն՝ ուրիշ ճար չկայ: Կէտք է նախ տունէն վոն տել այդ անօրէն մարդն եւ ապա ղատի կոչել:

**ԱՐԲ.** Արդէն տան տէրն ինքն է . . . ինչպէս նաեւ հօրդ ու մօրդ բոլոր կալուածոց . . .

**ԲԱԳ.** Ե՛ գուշակէի . . . : Ի՛նչպէս իմացար:

**ԱՐԲ.** Միշտ Լադմոսէն:

**ԲԱԳ.** Արդեօք կարելի չէ՞ շահիկ Լադմոսը:

**ԱՐԲ.** Հա՛, ստակի՞ջօրութեամբ: Լրտես մ'աւելի շատ վճարողին կողմը կ'անցնի:

**ԲԱԳ.** Եւ սակայն մենք՝— մ'անգամ չունինք:

**ԱՐԲ.** Ուրիշ միջոց մը կայ. եկուր գողնանք կալուածագրերը, որ՝ ըստ երեւոյթին՝ Լադմոսին քովն են:

**ԲԱԳ.** Բայց ի՞նչ պիտի ապացուցանեն այդ թղթերը՝ եթէ ոչ Ռուստովի իրաւունքը՝ հօրս բոլոր գոյիցը վրայ:

**ԱՐԲ.** Իրաւ է. բայց գոնէ կէտ մը կ'շահինք եւ մնացածը կ'ազատենք եւ թէ այն թղթերով հայրդ համոզես եւ անօրէնին դիմակը վար առնես:

**ԲԱԳ.** Է՛ ներելի՞ է գողութիւնը, Պարոն Արքուն, թէ եւ գողօնը լոկ թուղթ լինի . . .

**ԱՐԲ.** Ի՛նչ խղճահար ես, Բա՛գարատ. կեանք, պատիւ, կալուածք այն անզգամին ձեռքը խաղալիկներ եղած են եւ նպատակին հասնելու միջոցներ, եւ դո՛ւ ինձ նստեր բարոյական կ'կարդաս:

**ԲԱԳ.** Լա՛ւ ուրեմն, գործենք:

**ԱՐԲ.** Բայց առանց ծայնի, վասն՞զի Ռուստով ունի վարձու բռնած հագար աչք՝ որ մամուկներու պէս կ'դիտեն եւ իրենց ցանցին մէջ կ'բռնեն, եւ հարկիւր բերան ու գրիչ, որ տղիտաբար կամ ստակի համար իր սեւ խորհուրդները կ'պարտկեն եւ մինչեւ անգամ կ'ներբողեն . . . : Ռուստով չտեսնէ մեզ միատեղ . . . բաժնուինք: Շարունակ կասկած ունի թէ՛ ճանճերն անգամ իրեն դէմ կ'դաւադրեն, եւ ճանճի նման թշնամիներն անգամ կ'հալածէ: Ուստի՞ գողշումի՛ն . . . :

**ԲԱԳ.** Իր երկայն շուրջ հեռուէն կ'տեսնեմ . . . զնա՛, հեռացիր . . . :

**ԱՐԲ.** Դու ալ կակուղ եւ հանդարտ խօսէ՛, ռիչդ պահէ՛ . . . Թէ ոչ ամեն բան կ'արես: (Կ'հեկէ)

# ՏԵՍԻՍ Գ.

## ԲԱԳՆԱՐԱՏ Լ ԴՈՒՍՏՈՄ:

**ՌՈՒՍ.** Անտեսանելի՛ պատանի, ո՛ւր ես. ինչո՞ւ համար միշտ մութը կը փնտռես եւ չես տեսներ այն արեւն որ Լամարականաց գերդաստանին վրայ կ'ծագի՛ իմ շնորհիւ . . .

**ԲԱԳ.** Շինճու արեւ, տաքութիւն չունի, քանի որ մեր տունը սառնարան դարձած է:

**ՌՈՒՍ.** Ձեր բնիկ տունը Երասխածոր է, եւ հօրդ ազգատոհմին հոգին, անունն ու յիշատակն անոր վրայ կ'փայլին . . .

**ԲԱԳ.** Հապա մօ՛րս . . .

**ՌՈՒՍ.** Նա՛ երկինքն աւելի պայծառ եւ մշտավառ արեւ մը փնտռեց . . . Բայց . . . ինչո՞ւ երեսդ կախ է, պարոն. միթէ՞ գոհ չես իմ ծառայութենէս, միթէ՞ կարծես թէ հայրդ այնքան փայլ ու փառք պիտի ստանա՞ր աշխարհիմ մէջ, այնքան շքանշաններ պիտի ընդունէ՞ր, եթէ ես չաշխատէի:

**ԲԱԳ.** Ես առ ոչինչ կ'գրեմ այդ արտաքին պարծանքն, երբ ներքուստ արիւն, մահ, սուգ եւ աւերակ կ'տեսնեմ:

**ՌՈՒՍ.** Ուրեմն՝ կ'թողում ձեզ կոյր ճակատագրին եւ իսկոյն կ'երթամ հօրդ իմ հրաժարականս տալու խորհրդականութեան եւ մատակարարութեան պաշտօնէս: (Ժեկուսի) Ի՛նչ ապերախտ եւ կարճամիտ պատանի, որ ապագայ երջանկութիւնը ներկային ստորին եւ զծով շահերուն կ'ուզէ գոհել . . .

**ԲԱԳ.** Ե՛լսեմ բացազանչութիւնդ . . . : Ի՛նչ. միթէ սիրական մօր մ'անբնական մահը փոխարինելի՞ գոհ մ'է. միթէ . . .

**ՌՈՒՍ.** Անբնական . . . : Ի՛նչ ըսել կ'ուզես, պարոն . . . : Բառերդ կշռէ՛ . . .

**ԲԱԳ.** Արդէն ըսածս կ'իմանաս, եւ ըսելիքս կ'գուշակես . . .

**ՌՈՒՍ.** Ես գուշակ չեմ, այլ շիտակ մարդ մը, որ իր պարտքը կ'կատարէ:

**ԲԱԳ.** Ե՛րեւի թէ հօրս պէս միամիտները խաբել՝ քեզի պարտք կ'համարիս . . .

**ՌՈՒՍ.** Խաբել . . . : Է՛հ, կ'նախատես դիս, պարոն . . .

**ԲԱԳ.** Այդ բաւական չէ, այլ եւ կ'ատեմ քեզ, որ մեր տան կործանման կ'աշխատիս քու շահուղ համար:

**ՌՈՒՍ.** Անփոք՞ծ պատանի, աւելի հանդարտ խօսէ՛ . . . : Դու դեռ չգիտես թէ ես ո՛վ եմ:

**ԲԱԳ.** Գայլ մը՝ ոչխարի զգեստով . . .

**ՌՈՒՍ.** Այսպէս անսեղները կ'հալածուին միշտ եւ բարերարները կ'զբրպարտուին . . . : Լա՛ւ, ես կ'մեկնիմ . . . անմիջապէս, քանի որ իմ բարե-

կամուծինս, իմ անձնուիրութիւնս ձեր շահերուն համար այդպէս կ'մեկնես . . . իմ վարձքս առի . . .

**ԲԱԳ.** Քայց նախ դարձուր ինձ մայրս, եղբայրս, քոյրս, հօրս գոյքն եւ ապա զնա՛ր . . .

**ՌՈՒՍ.** (Վերադառնալով) Է՛հ, չափը կ'անցընես, պարոն, եւ ծանրապէս կ'աւազանես զիս . . .

**ԲԱԳ.** (ձեռքը սուրբին տանելով) Է՛հ, պատրաստ եմ քեզ ի մենամարտ հրաւիրելու . . .

**ՌՈՒՍ.** Վա՛հ, խելքդ գլուխդ չէ. հաւի հետ մենամարտիլ անպատիւ գործ կ'սեպեմ . . . Պարոն Քաղարատ, քիչ մ'ալ մեծցիր, սուր շարժել սորվէ եւ ապա քովս եկուր . . . : (Կ'մեկնէ)

## ՏԵՍԻԼ Գ.

### ԲԱԳԱՐԱՑ .

**ԲԱԳ.** Ի՛նչ վատ . . . վասն զի յանցաւոր է. ի՛նչպէս կծիկը կ'ղնէ . . . Գիտեմ պիտի գանգատի հօրս, բայց ամեն բան աչքս առած եմ . . . կա՛մ պիտի մեռնիմ, կա՛մ այս մարդը պիտի սպաննեմ . . .

## ՏԵՍԻԼ Ե.

### ԲԱԳԱՐԱՑ Լ ԱՐԲՈՒՆ .

**ԱՐԲ.** Ի՛նչ ապուր կերար, Քա՛ղարատ :

**ԲԱԳ.** Ի՛նչ պիտի ընէի . . . Ռուստոմին ցոյց տուի սուրս . . . կա՛մ ես անոր գլուխը պիտի ուտեմ, կա՛մ նա իմս . . . : Մա՛լ հաշտութիւն չկայ մեր մէջ :

**ԱՐԲ.** Գիտէի որ անհամբեր ես. շիտակ հօրդ գնաց եւ իր հրաժարականը տուաւ. բայց հայրդ մերժեց եւ աղաչեց որ միշտեւ մեքենային զալը շարունակէ իր պաշտօնը :

**ԲԱԳ.** Իրաւի շատ կոյր է հայրս : Մաղաչելու պէտք չունէր, Ռուստոմ այս օր ալ հոս է վաղն ալ :

**ԱՐԲ.** Հոգ չէ թէ որ մեկնի : Մայս տեղ՝ զրպանս՝ ունիմ ոչ միայն կալուածագրերն, այլ եւ ուրիշ աւելի ծանր բան մը . . .

**ԲԱԳ.** Ի՛նչ բան :

**ԱՐԲ.** Մօրդ ինքնագիր մէկ տոմսակը, որով կ'յայտնէ թէ՛ ծանր թոյնի եւ Ռուստոմի վրէժխնդրութեան զոհ կ'երթայ : Մայս տոմսակը Ռուստոմին մաս հալճիոն է :

**ԲԱԳ.** Նայէ ի՛նչպէս ուշ կանուխ արդարութիւնը տեղը կ'գայ . . . Քայց, Մարթոն, ի՛նչպէս գտար այդ տոմսակը :

**ԱՐԲ.** Դիպուածով մը : Երեւի թէ մայրդ մահուան անկողին մէջ գրած եւ տան մէջ վստահելի մարդ չգտնելով, այս տոմսակն իր սնարին մէջ կարած է : Սպասուհիի մը ձեռք անցնելով այդ տոմսակը՝ բարեբաղդաբար ինձ ցուցուց : Ձեռքս բան է ըսի, եւ առի զրպանս դրի :

**ԲԱԳ.** Տո՛ւր, կ'աղաչեմ, թղթերն եւ այդ տոմսակը . . . շուտով երթամ հօրս ցուցնեմ, որ վերջապէս հասկնայ թէ Ռուստոմ ի՛նչ տեսակ հրէշ մ'է :

**ԱՐԲ.** Հիմակ ժամանակը չէ. Ռուստոմը հօրդ քովը տեսայ . . . Սակից գատ՝ եթէ շիտակ տանիս ցոյց տաս, չպիտի հատայ . . . Թշնամութիւն պիտի կարծէ :

**ԲԱԳ.** Ուրեմն ի՛նչ կերպով ընենք . . .

**ԱՐԲ.** Պէտք է տարբեր կերպարանքով ներկայիս . . . որպէս թէ զաղտնիք մ'ունիս ըսելու Երասխաձորի վրայ . . . : Քայց երկուրին ծայնն ալ կը լսեմ, այս տեղ չգան. ելի՛ր, դու դուրս ելի՛ր, ես կ'մնամ : (Քաղարատ դուրս կ'եւնէ) :

## ՏԵՍԻԼ Զ.

### ԳԱՄՍՍԱՐ, ՌՈՒՍՏՈՄ Լ ԱՐԲՈՒՆ .

**ԿԱՄ.** (Ռուստոմի քղանցքէն քաշելով) Ձե՛, չէ՛, աշխարհ մէկ կողմ գայ, չպիտի թողում որ հրաժարիս : Նստի՛ր, այս սենեկին մէջ պիտի փակեմ քեզ. առանց քեզի ես ոչինչ եմ . . . Ինչո՞ւ բանի տեղ կ'ղնես անմիտ պատանիի մ'ըսածները, բաւական է որ ես քեզի հետ ըլլիմ : Պու՛ միշտ իմ խորհրդականս եւ մատակարարս պիտի մնաս եւ ես քեզի լիով պիտի վարձատրեմ, միայն սա մեքենան շուտով հասնէր . . .

**ՌՈՒՍ.** Ձե՛, ալ դիմանալիքս չմնաց. բարիք ընել եւ փոխարէն չարիք ընդունիլ, ի՛նչ անտանելի բան, Կամսար աղա : Ես իմ շունչս, իմ խելքս, իմ բոլոր ազդեցութիւնս, իմ կեանքս անգամ սպառեմ քու զերդաստանիդ համար, քու նիւթական եւ բարոյական շահերուդ համար, եւ կալուածներդ օրէ օր ոսկի դարձնեմ . . . եւ . . .

**ԱՐԲ.** (ձեռքով) Որպէս զի շուտով զրպանէ . . . :

**ՌՈՒՍ.** . . . Կամսարականաց իրաւունքն Երասխաձորին վրայ հաստատելու ջանա՛մ, կուրծքդ շքանշաններով զարդարել տամ, ազգատոհմիդ երջանկութեան համար զիշեր ցորեկ տընիմ, եւ ապա . . . ապա Քաղարատ տղուդ կողմէ այնքան ծանր խօսքեր, զրպարտութիւններ լսե՛մ . . . չէ՛, չէ՛, ես ահա կ'հրաժարիմ, կ'երթամ . . . (աթուէն եւնելու պէս շարժուա՛մ կ'ընէ) :

**ԱՐԲ.** (ձեռքով) Մուտ է. գամուած է այդ փափով անողին վրայ. ելնելիք չունի :

**ԿԱՄ.** Աստուծու սիրուն, մի՛ հրաժարիր, նստի՛ր . . . մեղք մի՛ սեպեր տղուս խօսքերը . . . տունս տեղս մոխրի վրայ պիտի նստեցնես եթէ հրաժարիս . . . բոլոր մեր ըրած ծախքերը այն մեքենային համար ծովը նետած պիտի ըլլինք . . .

**ՌՌԻՍ.** Ձէ՛, ալ հաստատ որոշած եմ, չպիտի նստիմ . . .

**ԿԱՄ.** Ռ՛հ, ինչ ճիւնքեր կ'ըբերէ այդ Ռագարատ տղաս իմ գլխուս . . . Պարոն Ռուստում, եթէ կ'ուզես իբրեւ զաւակ չեմ ճանչնար այն տղաս եւ ժառանգութենէ կ'զրկեմ . . .

**ԱՐԲ.** (մեկուսի) Ի՛նչ ժառանգութիւն մնաց որ:

**ՌՌԻՍ.** Ձէ՛, չէ՛, ես այնչափ քարսիրտ չեմ. հայր մը զաւկէն զատելու պաշտօն չունիմ, այլ միութիւն հաստատել . . . Սրղէն կ'մօտենայ ժամն՝ երբ մեքենան զալով՝ պիտի բանի եւ Լէման լինի հայ լին պիտի դառնայ . . .

**ԿԱՄ.** Ռ՛հ, բերանդ պագնեմ, ի՛նչ աղտը լուր . . .

**ՌՌԻՍ.** Բայց ես կ'մեկնիմ ահա . . . աւա՛ղ . . . ամեն բան անկատար պիտի մնայ: (մեկնել Կ'ձեռքնէ)

**ԿԱՄ.** (օձիբէն բռնելով) Ռ՛հ, մի՛, մի՛ մեկնիր, հոգիդ սիրես, Աստուածդ սիրես . . . պիտի սպաննես զիս եւ ապագաս: (առ ԱՐԲՈՆԸ) Սրբո՛ւն, շո՛ւտ օգնէ ինձ որ Պ. Ռուստումն ամոռն չիջնէ: (ԱՐԲՈՆԸ կ'մօտի, և փոխանակ վաբ բաշտելու, Կ'ՏԻԷ Ռուստումն որ ախոռէն ելնէ:)

**ԱՐԲ.** (մեկուսի) Պարա՛պ բան. նա աւելի կ'տեղատորուի փափուկ ամոռնի վրայ. ի՛նչ ծիծաղաշարժ խաղ՞է այս:

## ՏԵՍԻԼ Ի.

**ԿԱՄՍԵՐ, ՌՌԻՍՏՈՄ, ԱՐԲՈՆ և ՄՈՒՇԷԻ:**

**ՄՈՒՇ.** Տէ՛ր, տէր իմ . . . ո՛հ, վազելէն շունչս հատաւ . . .

**ԿԱՄ.** Խօսէ՛, անպիտան, ժամանակ գտար հեալու, մինչդեռ իմ սիրտս կ'հեկայ . . . նորէն ի՛նչ կայ . . .

**ՄՈՒՇ.** Շո՛ւտ, տէր իմ, շո՛ւտ, վա՛ր իջէր . . . մեծ, մեծ մարդիկ եկան այցելութեան . . . կարմիր, դեղին, կանաչ, կապոյտ ժապաւններ ունին իրենց կուրծքին վրայ, ոսկի թրթր բարձիկներ իրենց ուսերուն վրայ, երկայն սուրեր իրենց մէջքը . . . Կա՛մաւ, Կա՛մաւ, չրա՛ն, չրա՛ն, ֆրա՛ն, ֆրա՛ն կ'խօսին . . . կարծեմ ձեզի կ'ուզեն տեսնել . . . շատ խոշոր, փայլուն մարդիկ են . . .

**ՌՌԻՍ.** Հասկցա՛յ. Սա՛րգիս կոմսը, Պա՛րբա՛ր դուքսն եւ Կա՛ւրա՛ր հազարապետն են . . .

**ԿԱՄ.** Ի՛նչ կ'ըսես, Պարոն Ռուստում, իրա՛ւ . . . մեծ մարդիկ են . . . այս այցելութիւնն ալ միթէ քու շնորհդ չէ՞. ի՛նչ պարծանք . . . ուրախութենէս տեղս . . . չեմ կրնար կենալ: (առ ՄՈՒՇԷԸ) Ծօ՛ւնքս, մեծ սրահը հրամուցի՛ր այդ իշխանագոմնները:

**ՄՈՒՇ.** Հապա՛, ամոռներ ալ տուի որ նստին, թէեւ մէկ քանին կոտրած են, տէր իմ, երբ Երասխանոր երթանք, այն ատեն պիտի նորոգուին, ըսիք:

**ՌՌԻՍ.** Իրաւ. Երասխանորի ճամբան կ'մօտենայ, Կամսար աղա. աղտը լուրեր պիտի ընդունիս, գնա՛. միայն մոռցի՛ր զիս: Երթա՛ս-բարեաւ:

**ԱՐԲ.** (մեկուսի) Հրաժարողը տան տէրը կ'ճամբէ, ինք կ'մնայ:

**ԿԱՄ.** Բայց պէտք է որ հանգիստ սրտով երթամ: Վեր վար դռները գոցեցէք: Սրբո՛ւն, դուն դո՛ւքս ելիր եւ սա սենեկին դուռը պահպանէ. դու ալ, Մո՛ւշիկ, սա միւս դուռը կեցի՛ր, եւ մի՛ թողուր որ Պ. Ռուստում մեկնի, կ'իմանա՛ր:

**ԱՐԲ.** Լ ՄՈՒՇ. (ժպտն) Անհո՛գ եղի՛ր, Կամսար աղա. Պ. Ռուստումը չմեկնիր . . . իր տունն է: (Գուրս Կ'երէն և գռներուն քով Կ'կենան:)

## ՏԵՍԻԼ Բ.

**ՌՌԻՍՏՈՄ և ԿԱՄՍԵՐ:**

**ՌՌԻՍ.** Յաղթանակը տարի, թո՛ղ Պ. Բագարատ ճամի: Հապա՛նոր հիւրերն՝ որ իմ զրդմամբս եկած են, բոլորովին պիտի գրաւեն Կամսարի սիրտը . . . Եւ ո՛վ կ'մեկնի այս տեղէն, խե՛ւ եմ: Գեռ ամեն բան չմնացուցի: Իրաւ, Ջարարիկ ու Հիրիկ իմ ափիս ծէջն են, թէեւ շաղակրատ Տիկին Կամսար արդէն Աստուծոյ ծոցն է, Աստուած ողորմի հոգուն, բայց կ'մնայ սա ըմբոստ Բագարատն, որու զուխը պիտի ուտեմ անշուշտ. կ'մնան Պ. Կամսարի զանազան արտերն ու ազարակներն, որ քիչ օրէն իմ վրաս պիտի դառնան, վերջապէս գործս յաջող է: Քանի մ'օր ես եւ Կամսար աղան թող ծեռքերը զլխուն զարնէ . . . (Գուրս մը Կ'երէն գռնէն) Ո՛վ է այն . . .

## ՏԵՍԻԼ Թ.

**ՌՌԻՍՏՈՄ և ԿԱՄՍԵՐ:**

**ՌՌԻՍ.** Դո՛ւն ես, Կաղմոս, խեղ ըլլի, ի՛նչ կայ:

**ԿԱՄ.** Ի՛նչ պիտի ըլլի. գրասեղանիս մէջէն կալուածագրերդ գողցեր են . . .

**ՌՌԻՍ.** Գողցե՛ր են. ի՛նչ կ'ըսես, անօրէն, ո՛վ կրնայ գողնալ . . .

**ԿԱՄ.** Իրաւ որ ես ալ չգիտեմ . . .

**ՌՌԻՍ.** Ուրեմն դո՛ւն ես գողը . . .

**ԿԱՄ.** Ես լրտես եմ, բայց ժամանակէ մ'ի վեր, ուրիշներն ալ մեզ կ'լըրտեսեն, այս բանն մեր պայմանին մէջ չկար . . . ուստի հիմակ ազատ եմ . . .

**ՌՌԻՍ.** Թղթերս երեսան հանէ, թէ ոչ աչքերդ կ'հանեմ:

**ԿԱՄ.** Ես անմեղ եմ . . . միմակ անցեալ օր զինին քիչ մ'եւելկեկ փախեր էր, այնպէս որ գրասեղանիս մօտ սկսայ միափել. երբ աչքս բացի, տեսայ որ գրասեղանս բաց էր, եւ մէջէն թղթերը թռեր են . . .

**ՌՌԻՍ.** Ծօ՛ խելքդ թռուցի՛ր. ո՛վ առաւ ուրեմն. թող գրասեղանիդ վրայ պառկելի՛ր . . .

**ԿԱՄ.** Ի՛նչ ծանր եւ սրտմաշուր պաշտօն է իմս . . . չէ՛, չէ՛, ես պիտի փախչիմ . . . սրտիս վրայ լեռ մը կայ որ կ'ճգմէ զիս . . .

**ՌՌԻՍ.** Մի՛ն կ'լորիկ ոսկիները տուր ինձ եւ այնպէս կորիր, անմիտ մարդ:

**ԿԱԳ.** Մանոնը հալեցան գացին. հիմակ ես կ'հալիմ. մանաւանդ որ զիշեր-  
ներն ինձ կ'երեւի խեղճ Կամսար խաթունն եւ վրաս կրակ կ'ծափէ . . . հի-  
ւանդ եմ. թող որ երթամ . . .

**ՌՈՒՍ.** Մալո՛ւշ, գոնէ ըսէ՛, որո՞ւ վրայ կասկած ունիս . . .

**ԿԱԳ.** Քաղաքատին վրայ . . . քանի երեսը նայիմ, սիրտս փորս կ'խա-  
ղայ . . .

**ՌՈՒՍ.** Շատ կարելի է որ նա ուրիշին ձեռօք կալուածագրերը գողցած է.  
ինք շատ աւելի է կենդանի մ'է, եւ այդպիսի գործ մը չըներ: (Կ'մտածէ)

**ԿԱԳ.** Ա՛տղաչեմ, հրաման տուր որ երթամ, հիւանդ եմ . . .

**ՌՈՒՍ.** Ա՛հաւտամ, զնա՛ դեղ առ . . .

**ԿԱԳ.** Առգմասի դեղէն չեմ ուզեր . . . զիտես . . .

**ՌՈՒՍ.** Պնա՛, զնա՛ վարը նստիր. երբ հրամայեմ այն ժամանակ պիտի  
մեկնիս: (Կաղմոս դողալով դուրս կ'ելնէ):

## ՏԵՍԻԼ Ժ.

**ՌՈՒՍՏՈՄ, ԿԱՄԱՆՅԷ:**

**ՌՈՒՍ.** (Վեր վար կ'ըջալէ արտօնօք) Յաղթունիմս կատարեալ չէ. բան մը  
կ'դառնայ. կարծեմ թէ Կաղմոս զիս կ'մատնէ . . . Ի՛նչ այլանդակ մարդ.  
իր ոտուերէն անգամ կ'վախնայ. կ'տանջէ զինք խիղճն, որ, ըստ իս, պար-  
զապէս անգոյ ուրուական մ'է, միայն տղոց ահարկու: Ողորմելի՛ մարդ . . .  
կ'երեւի թէ Քաղաքատ ակոսները կ'սրէ ինձի դէմ, բայց ես պիտի խորտա-  
կեմ այդ ակոսները . . . Պարծեալ ծայն կ'լսեմ . . . չեն թողուր որ մարդս  
երկու բոպէ հանդարտ խորհի եւ ընելիքն որոշէ:

## ՏԵՍԻԼ ԺԱ.

**ՌՈՒՍՏՈՄ, ԱՐԲՈՒՆ, ՄՈՒՇԻԿ:**

**ՌՈՒՍ.** Ի՛նչ կ'ուզէք:

**ԱՐԲ.** Քանի մը մարդիկ՝ որ կ'ըսեն թէ՛ գրիչ, լուսին, արեւ եւ աշխարհ  
շարժել գիտեն, կ'փափաքին ձեզ տեսնել, տէր իմ:

**ՌՈՒՍ.** Անոն չունի՛ն:

**ԱՐԲ.** Ունին. Սեւունի, Հովնակ, Պիսակ:

**ՌՈՒՍ.** Հա՛, մեր գիտցած հացկատակներն են. թող հրամեն:

**ՄՈՒՇ.** Պարոն Ռուստոմ, դոները պահպանե՛նք. պիտի հրաժարի՞ք, թէ  
ոչ երթանք. պիտի փախչի՞ք . . .

**ՌՈՒՍ.** Ջեր պաշտօնը կատարեցէք: Պատուաւոր մարդն իր խօսքին զե-  
րին է:

**ԱՐԲ.** (առ Մաւշիկ) Ըսել կ'ուզէ, Մուշիկ աղբեր, որ կրնանք դոները կըռ-  
նակի վրայ բանալ, եւ մեր գործին երթալ . . . : (Կ'աշխուշ)

## ՏԵՍԻԼ ԺԲ.

**ՌՈՒՍՏՈՄ, ՍԵՒՈՒՆԻ, ՀՈՎՆԱԿ, ԳԻՍԿԱ:**

**ՌՈՒՍ.** Քարի՛ եկաք, ստա՛կ կ'ուզէք . . .

**ՍԵՒ.** Ռ՛հ, ի՛նչ խօսք է այդ. չգիտէք, տէր իմ, որ Մաղին համար սիրտ  
հոգի կ'ծափենք, անօթի, ծարաւ:

**ՌՈՒՍ.** Այսինքն, շատ մեղան կ'ծափէք . . . Ուրեմն ի՛նչ է ձեր այցելու-  
թեան նպատակը, շո՛ւտ ըսէք . . . :

**ՍԵՒ.** Նախ՛ աւագ պարտ կ'համարինք ողջունել ձեր հանճարն՝ որ նախա-  
խնամութեան պաշտօն կ'վարէ եւ հայութեան վրայ հսկելով՝ իր լոյսը կ'ծա-  
ւալէ Մրասխաճորի վրայ: Ուստի հայ մամլոյն կողմէ եկած ենք աղաչելու  
ձեզ, որ այդ վսեմ պաշտօնէն չհրաժարիք:

**ՌՈՒՍ.** (Ժգուսի) Յիմար չե՛ն: (առ Սեւունի) Անկարելի՛ բան . . .

**ՀՈՎ.** Արդեօք կարելի՞ է գոնէ պատճառն իմանալ . . .

**ՌՈՒՍ.** Ամպերն, որ այդ լոյսը կ'ծածկեն . . .

**ԳԻՍ.** Ի՛հ, կ'վանենք այդ ամպերը . . . :

**ՌՈՒՍ.** Ի՛՞ ունի՞ք զօրութիւն:

**ՍԵՒ.** Իմ գրիչս արդէն ուումը մ'է, որ կ'խորտակէ. Հովնակին իմացակա-  
նութիւնը սլաք մ'է, որ կ'ծակէ. Պիսակին հոգին վառարան մ'է, որ կ'հըր-  
դենէ. այս ամեն ոյժերը ձեր հրամանին տակն են, տէր իմ:

**ՌՈՒՍ.** (Ժգուսի) Ի՛նչպէս շողորորթելու ատեն, զիտեն նաեւ ինքզինքնին  
շողորորթել այս փոքր մարդիկ . . . : (առ Սեւունի) Պա՛ռ ամենէ ճարտասանը  
կ'երեւիս . . . քեզի կ'ուղղեմ իմ շնորհակալիքս: Ուրեմն ուղղեցէ՛ք ձեր այդ  
զէնքերը թշնամիին դէմ . . . եւ այդ ձեր գործակցութեամբ թերեւ շարունա-  
կեմ պաշտօնս:

**ՀՈՎ.** Պայման չենք ընդունիր. ո՛ր է թշնամին. բաւական է որ նշմար մը  
ընէք:

**ՌՈՒՍ.** Ի՛նչ ըսեմ. աներեւոյթ էակ մ'է, հոգի մը, ամպ մ'որ կ'ջանայ խոր-  
տակել այն մեքենան, որով պիտի շինուի Կամսարականաց տոհմային շէնքը:

**ԳԻՍ.** Ուրեմն, բարեկամներ, խօսինք, գրենք, գոչենք այդ աներեւոյթին  
դէմ . . . :

**ՍԵՒ.** Մեր պայմանն ազգասիրական է, զիտէք, տէր իմ . . . որ . . .

**ՌՈՒՍ.** Անշուշտ գիտեմ . . . (Ժբաբ մ'ուզէ զբաւանէն կ'հանէ) Սա՛ղէք . . . :

**ՀՈՎ.** Ի՛նչ սրամիտ մարդ . . . :

**ԳԻՍ.** Ի՛նչ վեհանձն մարդ . . . :

**ՍԵՒ.** Ի՛նչ առատասիրտ հոգի . . . :

**ՌՈՒՍ. Հերի՛ք է՛.՛.՛.** զացէր եւ մեր պարտքը կատարեցէր . . . անմոռի-  
րաբար:

**ՍԵՒ. ԳԻՍ. Է ՀՈՎ.** (Դիտելով) Անմոռիւթիւնը մեր նշանաբանն է, տէր  
իմ, եւ մեր թերթերուն էջերը պիտի սենան մեր վսեմ յատկութեաց փայլով:  
(Կ'աւելնէ)

## ՏԵՍԻԼ ԺԳ.

**ՌՈՒՍՏՈՄ, ԿԸՄՍԱՐ:**

**ԿԸՄ. Փա՛ռք,** որ հոս ես, Պարոն Ռուստոմ. սիրտս դողի մէջ էր. կար-  
ծէի թէ հրաժարականդ զրաժ զացած ես . . . սեւ սուգերու մէջ պիտի մըտ-  
նէի . . . :

**ՌՈՒՍ. Շատոնց** զացած էի՝ եթէ այդ անզգամ պահակներդ, Մարոն եւ  
Մուշիկ, բայլ մ'առնելու՝ կենացս չսպառնային, մանաւանդ սա հայ մամ-  
լոյն ներկայացուցիչներն օժիթէս չընէին . . . :

**ՄՈՒՇ.** (Դրան քով քնանալ ձեռքներով Արբուսին հետ, դուրսը կ'վերցնէ  
Է կ'ըսէ աչքերը շփելով) Մո'ւտ է:

**ՌՈՒՍ. Իսկ** դու ի՞նչ ըրիր, Եւամսար աղա:

**ԿԸՄ. Սրղէն** գիտես. գործերը կարգին են. յոյս շատ կայ որ ամսէ մը  
ճամբայ ելնենք դէպ ի Շրասխածոր: Այցելու կոմսերն ու դքսերը մեծ մեծ  
խոստումներ ըրին եւ ըսին որ բոլ հրահանգներուդ հետեւիմ միշտ: Մա ալ  
այս գիտնալով չէի թողոր, որ պաշտօնէդ հրաժարիս:

**ՌՈՒՍ. Քայց** ես գէշ լուրեր առի . . . : Մեր մեքենային դէմ կ'գործեն .  
և կարծեմ, մեր յատակագիծը պիտի արուի . . . :

**ԿԸՄ. Ի՞նչ** կ'ըսես, Պարոն Ռուստոմ. . . ո՞վ պիտի արէ . . .

**ՌՈՒՍ. Այդպիսի** ծայն մ'ականջիս հասաւ. պէտք է որ երթամ ստուգեմ:  
Դուր ալ ջանացէր շահիլ Քազարատը: Ես ռիսակալ մարդ չեմ: Այդ միա-  
միտ պատանիին կ'ներեմ. այսպիսի բարակ բաներու խելքը չհասնիր . . .  
խսկ՝ եթէ միշտ անզգաստ մնայ, քիչ մ'օղափոխումնան համար դուրս դրկէ .  
. . . : Դարձեալ դու գիտես, հայրն ես. մնաս բարեւ . . . :

**ԿԸՄ. Ես** գիտեմ ի՞նչ պիտի ընեմ, Պարոն Ռուստոմ, եթէ չհնազանդի .  
. . . : Հապա դու շուտով պիտի դառնաս . . . չըլլի որ հրաժարիս . . . :

**ՌՈՒՍ. Աստուած** գիտէ . . . : (Կ'աւելնէ)

## ՏԵՍԻԼ ԺԳ.

**ԿԸՄՍԱՐ արանջէն:**

**ԿԸՄ. Ի՞նչ** անխոհեմ տղայ է սա Քազարատ. ո՛րքան վշտացուցեր է  
մեր Պ. Ռուստոմին սիրտն . . . : Ի՛շ, շատ կ'սիրեմ այդ թշուառականն՝ իր  
բոլոր պակասութիւններուն չնայելով . . . Ռուստոմն ալ բարի մարդ է . . .  
եւ ո՛րչափ ներողամիտ . . . բայց ի՞նչպէս համոզեմ այն պինդ զուխը . . .  
չհասկնար թէ ի՞նչ մեծ շահ եւ ապագայ պիտի ունենայ, երբ միանգամ յա-  
ջողիմ . . . իմ անբաւ հարստութեամբս Շրասխածորը դրախտ պիտի դար-  
ձընեմ . . . Մե՛ղք որ կլին այս փառքին չհասաւ . . . Աստուած ողորմի  
հոգուն . . . : Ո՞վ կայ դուրսը, եկէ՛ք . . . նայիմ պիտի կարենամ դարձնել  
իր զուխը . . . եկէ՛ք . . . ո՞վ կայ դուրսը . . .

## ՏԵՍԻԼ ԺԵ.

**ԿԸՄՍԱՐ, ՋԱԳԵՐԻԿ Է ՀԻՐԻԿ ՎԵՂԷՎ:**

**ՀԻՐ. Ո՛ր** էիր, հա՛յր. քեզի կ'վնասեմ երկու ժամ է:

**ԿԸՄ. Ի՞նչ** կայ, ա՛ղջիկ . . .

**ՀԻՐ. Ա՛լ** աղջիկդ չեմ . . . օրհնութիւնդ տուր ինձ . . . վաղը պիտի  
կարգուիմ:

**ԿԸՄ. Պիտի** կարգուի՞ն, աղջիկ. այդչափ շո՛ւտ. դեռ մօրդ սուգն ունիս .  
. . . խե՛նդ ես:

**ՀԻՐ. Գիտուն** եւ ազատամիտ աղջիկի համար՝ ո՛չ սուգ կայ եւ ո՛չ ժամա-  
նակ: Աղոնք նախապաշարմունք են . . . :

**ԿԸՄ. Ի՛շ,** չես ամենար, ա՛ղջիկ:

**ՀԻՐ. Ամօթն** ի՞նչ է . . . ես ազատ ծնայ, ազատ պիտի . . . կարգուիմ  
. . . եւ ուզածս պիտի առնեմ . . . :

**ԿԸՄ. (Ժպտալով Ժպտելով)** Մեր աղջիկը քիչ մը համարձակ մեծցաւ . . .  
բանահիւս է . . . ի՞նչ ընես, բաշելու է: (առ ՀԻՐԻԿ) Գո՛նէ քիչ մը համբե-  
րէիր, որ հարսնիրն Շրասխածոր ընէինք . . . :

**ՀԻՐ. Վո՛ւյ,** խելքիդ մեռնիմ, հա՛յրիկ, մինչեւ որ այդ խնձորն հասուն-  
նայ, իմ մագերս պիտի ճերմկին . . . : Ի՞նչ. պառանամ նէ պիտի կար-  
գուիմ . . . :

**ՋԱԳ. Հա՛յրիկ,** չէի՞ ըսեր քեզի. կ'տեսնես, հասկցած ջրդիկդ չէ:

**ՀԻՐ. Նորէ՛ն** սկսար, մոռկի՛ ծագով . . . :

**ՋԱԲ.** Հապա ատեն մը կ'ըսէիր, դու, կա'տուիկ, որ մարապետ պիտի ըլլիս, որ զիրբերող հետ պիտի կարգուիս, բու նշանածներդ են Լամարդին, Պայրն, Հիւկո . . . հիմակ ա'յսչափ նշանած կ'ըզհետ մէկ հատիկի համար. եւ ի՜նչ նշանած. մէկ աչքը կոյր է, պէխին կէսը մուկը կերեր է, ականջին մէկ կտորը՝ կատուն. կրտած հաւի մը կ'նմանի. այս բաւական չէ, օտարական մ'է, եւ հայերէն չգիտէ . . . խերը տեսնես:

**ՀԻՐ.** (ոտքերը դեռնելով զաբնելով) Հիմակ կու լամ, հայրիկ. սա խելին խօսք պիտի հասկցնես. հիմակ երեսները պիտի ճանկոտեմ . . .

**ԿԱՄ.** Բայց, ա'ղջիկս . . . այդ այլանդակ նշանածն ո'վ ընտրեց քեզի համար . . . :

**ՀԻՐ.** Բարեկամդ Պ. Ռուստում . . . :

**ԿԱՄ.** Օ՛հ, այն ատեն իրաւունք ունիս: (առ Ջաբաբէկ) Ծօ՛ դուն ուրիշին գործին ի՜նչ կ'խառնուիս:

**ՋԱԲ.** Իրաւ է, որ ես ալ իմ գործս ունիմ. ինձի ալ օրհնութիւնդ տուր, հա'յրիկ:

**ԿԱՄ.** Ծօ՛ դո՛ւ ալ կ'կարգուիս:

**ՋԱԲ.** Ես համալսարան պիտի երթամ որ այր բէն սորվիմ . . . :

**ԿԱՄ.** Ծօ՛ այս տեղ չե՛ս կրնար բան սորվիլ:

**ՋԱԲ.** Հապա բու գիտուններդ ինձի յարմար բան մը չգտան, մէկ երկու ժամ կուտեղն ետեւ: Այս տեղ մնալով բեռնակի՛ր պիտի ըլլիմ . . .

**ՀԻՐ.** Հիմակ ի՜նչ ես որ . . . պա'րոնիկ . . .

**ՋԱԲ.** Լեզուդ քեզի քաշէ . . .

**ԿԱՄ.** Է՛յ, լո՛ւտ . . . ծօ՛ ո'վ ըսաւ որ . . . համալսարանն երթաս:

**ՋԱԲ.** Պ. Ռուստում:

**ԿԱՄ.** Է՛յ այն ատեն խնդիրը կ'փոխուի . . . գոնէ սպասէիր որ Մրասխա՝ ծոր երթալէն ետեւ ուսումդ սկսէիր:

**ՋԱԲ.** Ի՜նչ. իմ թոռներուն հետ . . .

**ԿԱՄ.** Ուրեմն կ'օրհնեմ ձեզ, զացէ՛ք . . . բայց Բագարատ ո'ր է . . .  
**Մ. րբո՛ւն, Մուշի՛կ, եկէ՛ք . . . : Դուր գացէ՛ք . . . Աստուած հետերնիդ:**  
(Գուրս կ'ենեն):

## ՏԵՍԻԼ ԺՉ.

ԳԵՄՍԵՐ, ԱՐԲՈՒՆ Լ ՄՈՒՇԻԿ:

**ԱՐԲ. Լ ՄՈՒՇ.** (զատ դռներէ մտնելով) Մե՛զ կ'կանչէք, տէ՛ր իմ:

**ԿԱՄ.** Ո՛ր էք, անպիտաններ:

**ՄՈՒՇ.** Դռները կ'պահպանէինք, տէ՛ր իմ:

**ԿԱՄ.** Ծօ՛, որո՛ւ դէմ:

**ԱՐԲ.** Ձեզի դէմ, տէ՛ր իմ:

**ԿԱՄ.** Ինձի՛ դէմ. եւ ինչո՛ւ:

**ՄՈՒՇ.** Որպէս զի 'չփախչիր, եւ ժամանակէն առաջ Մրասխա՞ծոր չերթար:

**ԿԱՄ.** Ծօ՛ ո'վ տուաւ ձեզի այդ հրամանը:

**ԱՐԲ. Պ. Ռուստում . . . Ռատի քիչ մ'առաջ՝ ներսէն դուրս կ'պահպանէինք դռներն, հիմակ դրսէն ներս կ'պահպանենք, որ ո՛չ մարդ մտնէ եւ ո՛չ ելնէ:**

**ԿԱՄ.** Աստուած ձեզի շնորհ տայ: Խե՛նդ էք. սխալ հասկցած էք Պ. Ռուստումին պատուէրը:

**ՄՈՒՇ.** Է՛յ այս տեղ ո՛ր խօսքն, քայն, նպատակն շիտակ են, տէ՛ր իմ. . .

**ԿԱՄ.** Վախնամ, որ Բագարատն ալ եկած եւ դռները գոց գտնելով՝ գացած է:

**ԱՐԲ. Շատ հաւանական է որ Պ. Ռուստում՝** մասնաւոր դիտմամբ պատուիրեց որ դռները գոց պահենք եւ չբանանք:

**ԿԱՄ.** Ի՜նչ այլանդակ բաներ կ'ըսէք: Արդեօք լուր մ'առի՞ր Բագարատի վրայ:

**ՄՈՒՇ.** Երբ դրան երկաթը շինել տալու համար քիչ մը դուրս ելայ, շատ անախորժ ծայներ ականջիս զարկին, տէ՛ր իմ:

**ԿԱՄ.** Ի՜նչ լուրեր, պատմէ՛:

**ՄՈՒՇ.** Ըսին թէ մէկ քանի ծիաւորներ զինեալ յանկարծ Պ. Բագարատը յափշտակելով՝ հեռու տեղ մը տարեր բանտարկել են, բայց որդիդ յաջողոր է խոյս տալ . . . մինակ չգիտցուիր թէ ո՛ր է . . .

**ԿԱՄ.** Է՛յ ո'վ կ'յանդգնի որդիս բանտարկել. ի՜նչ յանցանք գործած է . . .

**ՄՈՒՇ.** Կարելի է . . . լի է . . . լի է . . . Պ. Ռուստումը:

**ԿԱՄ.** Անկարելի՛, անկարելի բան: Իրաւ միասին կուի մ'ունեցան . . . բայց Պ. Ռուստում ոխակալ մարդ չէ, թէեւ զօրաւոր մարդ է . . .

**ԱՐԲ.** Ո՛վ գիտէ . . .

**ԿԱՄ.** Ո՛հ, իմ յո՛յսս, իմ զաւա՛կս . . . Արդեօք յուսահատութենէ զըլխոն ձիւն մը բերաւ . . . չեմ կարծեր: Հապա որո՛ւ հետ պիտի երթամ Մրասխա՞ծոր . . . Շո՛ւտ, շո՛ւտ երթանք զինք փնտուենք . . . :

(Աճնքը դուրս կ'ենեն):

## ՏԵՍԻԼ ԺԻ.

ՌՈՒՍՏՈՄ — ԶՆՅՆ Լ ԴԻՄԻՐ:

**ՌՈՒՍ. Ա՛խ,** ժամանակին իմացայ պատրաստուած որոգայթը . . . այնքան խնամրով ու ճարպիկութեամբ շինած շէնքս, բաղդս, մէկ վայրկենի մէջ պիտի փլէր, եթէ արթուն չըլլէի . . . բայց Բագարատ պարսպ զուիս չէ . . . միշտ վախ ունէի իրմէ . . . եւ իրօք՝ բոլոր գաղտնի թղթերս եւ մասնաւոր ժօրն ինքնագիր մէկ տոմսակը գտնելով՝ ինչպէս որ իմացայ, իմ կործանմանս

դատաւճիւրն իր ձեռքն ունէր . . . Ի՞նչ բնեմ ես այն տխմար Կաղմոսին . . . Իսկոյն իմ որոգայթս լարեցի . բռնեցի զինք իմ մէկ բանի գաղտնի գործակախնեբուս ձեռք . արդէն մուծ բանսն էր, եւ ձեռքը գանուած թղթերը բռնի պիտի առնէին, բայց կ'իմանամ որ բանտէն փախեր է եւ քաղքին մէջ մուրացկանի հագուստով կ'պտըտի . . . ո՞ր, չգիտեմ . . . Ի՞նչ մտառանջութիւն . . . կ'կատղիմ, ձեռքէս սահեցաւ որսը . . . բայց դեռ յոյս ունիմ . իմ զէնքս պատրաստ է . . . այս անգամ վերստին լրագիրները զայն կ'սրեն զըրջով . . . անտարակոյս այդ մուրացկանը պիտի գայ գանէ իր հայրն եւ ամեն բան պիտի յայտնէ . . . այս է իր միակ փափաքը . . . Մէյն ժամանակ . . . (ահա՛նչ կ'դնէ) Ղուռնիւն, Ռուստոմ . . . ոտքի ձայն կ'լսեմ . . . ո՞վ է այն . . . ո՞վ . . . :

## ՏԵՍԻԼ ԺԸ.

ՌՈՒՍՏՈՄ Լ ԿԵՄՍԵՐ:

ԿԼՄ. (արտոբնօք) Մ. խ, ո՞ր ես, բա՛րեկամ, քեզ փնտռելէն հոգիս բերանս եկաւ . . . Ի՞նչ լուր, կ'աղաչեմ, Քաղաքատին վրայ . ես սեւ սեւ լուրեր կ'առնեմ, ստո՛յգ են . . . : (աչքերը կ'լեցուին և կ'սրբէ)

ՌՈՒՍ. Ի՞նչ ցաւ պահեմ . . . ես ալ չկրցայ արտուրս բռնել, երբ սա լրագրին մէջ կարդացի թէ . . . ա՛հ, սիրտս չդիմանար, թշուա՛ռ հայր . դու եթէ կ'արող ես, կարդա՛ սա տողերը (լրագրին անոր կ'տայ՝ էրբ աչքերուն արտուրբ սրբելով):

ԿԼՄ. (կ'հարգայ) «Ստոյգ աղբիւրէ կ'իմանանք, որ Ղսեմնապատի եւ գեւ-«րահանճար Կամսար պէյլին երէց որդին, Ս. զնուաշուր Պ. Քաղաքատ, ծով-«եզրը պտըտելու միջոցին դաւաճան մը վրան կ'յարձակի եւ զինք կարեկէր «վիրաւորելով՝ մարմինը ծովը կ'նետէ . . . »: Մ. խ, որդեակ իմ . . . (կ'ե-նայ լրագրին, և ձեռքովն երեսը կ'ծածկէ) Ձեմ կարող շարունակել. հոգիս կը հատնի, Պ. Ռուստոմ . . .

ՌՈՒՍ. Թշուա՛ռ հայր . . . գոնէ բաշումեամբ ծախսեր է իր կեանքը . . . որդիդ, Կամսար աղա, դիցազնի արիւն ունէր . . .

ԿԼՄ. Ի՞նչ բեր է . . .

ՌՈՒՍ. Ծարունակէ՛ . . . (լրագրը կ'տայ):

ԿԼՄ. (կ'շարունակէ ընթերցումը) — . . . «Կամսարականաց քաջազն տոհ-«մին արժանի թուն՝ Քաղաքատ, թէեւ վիրաւոր, իսկոյն ծովէն դուրս կ'ցատ-«կէ, կ'ընէ մարդասպանը եւ ոստիկանութեան յանձնելէն ետեւ՝ վերստին «ծովը կ'նետուի՝ ըսելով. — «Մ. յս վէրքս մահաբեր է. իմ ճակատագիրս է՝ «ծովուն յատակը լուալ մարմինս եւ ձուկերուն փորն իմ գերեզմանս ընել . . . »: «— Ի՞նչ վսեմ խօսք . . . Ձերթ ասուպ, որ ընդ հորիզոնն սլանայ՝ ընկաւ «նա անհունութեան ծոցն: Մեր ստացած վերջին աղեղնկութեանց նայելով՝ «մարդասպանն ոստիկանութեան բանտին խոյս տուեր է, եւ այժմ ծպտեալ կը

«պտըտի քաղքին մէջ»: — (կ'սօսէ) Ո՛հ, ինչպէս սիրտս կտոր կտոր կ'ըլլի . . . վերջին օրերն ի՞նչպէս գէշ կ'վարուէի խեղճ Քաղաքատիս հետ . . . . այս բանս աւելի կ'տանջէ սիրտս . . . ալ ի՞նչ ընեմ ես Յրասխածորն . . . : Քայց ուրիշ կերպ լսած էի ես իր վրայ . . . . ըսին որ՝ որդիս բռնի բանտը դրեր են . . . :

ՌՈՒՍ. Լրագիրները սուտ չեն խօսիր . վերջին լուրն աւելի հաւանական կ'երեւի, Կամսար աղա: Ես երեւի նաեւ որ որդիդ դուրսը թշնամի ունէր . . . Մեր նուիրական պարտքն է գտնել մարդասպանը . . . եւ տարակոյս չունիմ որ պիտի գտնենք . . . : Մ. յսորունէ սուրդ մի՛ հաներ մէջքէդ . . . պէտք պիտի ըլլի . . . անօրէնին արինը պիտի ծծեմ, որ անմեղ մը, Կամսարա-կանաց յուսատու եւ հոտաւէտ մէկ ծաղիկն անգթաբար հնծեց . . .

ԿԼՄ. Մ. հ, Պ. Ռուստոմ, հոգի, շունչ չմնաց վրաս . չեմ յուսար որ այ-սուհետեւ երկար ապրիմ . . . Ռուստի՛ դու, դո՛ւ պիտի լուծես վրէժս . . .

ՌՈՒՍ. Հոգ մի՛ ըներ . . . վրէժխնդրութեան ժամը կ'մօտի . . . Ինչպէս իմացայ, այն անգամ մարդասպանն՝ բու կենացդ դէմ ալ կ'դաւաճանէ . . .

## ՏԵՍԻԼ ԺԹ.

ԿԵՄՍԵՐ, ՌՈՒՍՏՈՄ, ՄԱՐԳԵԼԻԱՆ ԵՆ ԴԵՐԱՆ ԴԵ՛՛՛՛:

ԿԼՄ. Ո՞վ է այն . . .

ՄՈՒՐԵՅ. Նսեղճ մուրացկան մ'որ կարեւոր լուրեր ունի հաղորդել քեզի, բու որդւոյդ վրայ:

ՌՈՒՍ. Կանկածելի է այդ մարդն. (կ'սուսայ) Մարքոն, Մուշիկ, Կաղ-մոս, եկէ՛ք . . . :

## ՏԵՍԻԼ Ի.

ՍՈՒՆՋԻՆԷ, ԵՐԲՈՒՆ, ՄՈՒՇԷԿ, ԿԵՂՄՈՍ:

ՌՈՒՍ. Դեռ'րս հանեցէք սա մարդը . . .

ՄՈՒՐԵՅ. Ես խօսք մ'ունիմ միայն, թոյլ տուր, դու անօրէն . . . (զգես-տին տակէն դաշոյն մը հանելու վրայ է):

ՌՈՒՍ. Մ. հ, Կամսար աղա, այս է զաւակդ սպաննողը. այս է . . . ըսի . . . բու արեանդ ալ ծարաւի զագանը . . .

ԿԼՄ. (սուրն յանկարծ քաշելով վրան կ'յարձակի սր գաւէն) Ո՛ւ անօրէն, որդւոյս արինը վրէժ կ'գոչէ . . . . ա՛ո փոխարէն . . . . (ըսելով քայլ մը կ'առնէ, երբ մուրացկանը շուտ մը հազուստը վար կ'ձգէ, և ձեռքը տամակ մը բռնած ցոյց տալով՝ նոյն ինքն Բաղաբատ երևան կ'եւնէ):

ԲԱԳ. Հա՛յր իմ, ահա՛ այս տոմսակը վրէժ կ'պահանջէ . . . (պահ մը՝  
Ռուստոմ քար կտրած, Նամսար՝ բոլորովին շուարած և աչքը՝ Ռուստոմի վրայ  
զայրոյթով սեւեռած, Բագարատ՝ հօրը ոտքն ընկած, և միւս բոլոր զերասան-  
ներն՝ հիացման մէջ՝ անշարժ կեցած):

ԿԱՄ Ելի՛ր, ո՛տք ելիր, որդեակ. (որդին կ'գրկէ մէկ ձեռքով և միւսովը  
տոմսակն առած կ'կարգայ) — «Ռուստոմ իմ տունս փլեց, զաւակներս իզմէ  
բաժնեց, խեղճ ամուսինս խաբեց՝ Բա՛գարատ մը հրապոյրով, եւ հիմակ իմ  
կեանքս անտարեց . . . ես կ'մեռնիմ . . . Պարո՛ն Նամսար, պահպանէ՛  
զլուխդ, պահպանէ՛ Բագարատս . . . օձ մը կայ տան մէջ . . . :

«Բա՛գարատ Բագարատ»

«ՀՈՒՇԱՆ»

(առ Ռուստոմ) Է՛յ, հրէ՛շ . . . ի՛նչ անդունդ բերիր ձգեցիր զիս. հիմակ կը  
բացուին աչքերս . . . . կ'տեսնեմ լոյսը, այս զաւկիս շնորհիւ, որու սիրտը  
մազ մնաց պիտի ծակէի այս սրովս . . . : Ներար կնոջս զլուխը, աւերակ  
դարձուցիր տունս, զաւակներս իզմէ առիր, եւ կ'ուզէիր որ այս Բագարատս  
ալ ձեռօքս մորթեմ . . . : Է՛հ, լցա՛ւ անօրէնութեանդ չափն . . . ա՛ռ վարձ-  
քըդ (Ռուստոմին վրայ կ'վազէ և՛ սուրն առնելով՝ անոր կուրծքը կ'մղէ) Այս-  
պէս պիտի սատակին իմ տանս թշնամիներն . . . :

ԱՄԵՆ-ՔԸ. (Քաբերան) Բնկա՛ւ անօրէնն . . . . . :

(Վարադայրը կ'իջնէ.)

Մ. Մ.

ՎԵՐՁ

ՀՀ Ազգային գրադարան



NL0338531

